


ՔՐԻՍՏՈՆԵ ՄԵԼքՈՆՅԱՆ



ԽՈՐՀՈՎ - ԹՈՒՐՔԱԿԱ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1945 - 1947 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ,  
ՍԵՎՃՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ  
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԵՐԵՎԱՆ

Digitized by  
Greene people  
J. Livingston Sulphur


~~J. Livingston Sulphur~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՔՐԻՍԻՆԵ ՄԵԼքոնՅԱՆ

A 95163

ԽՈՐՀՐԴԱ – ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1945 – 1947 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.  
ՄԵՎՃՈՎՅԱՆ ՆԵՐՈՒՅՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ  
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ



ԵՐԵՎԱՆ – 2009

ՀՏԴ 327:93/94:941(479.25)

ԳՄԴ 66.4+63.3+63.3(2Հ)

Մ 537

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է  
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱՎԻԴՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՍՔ

ԽՄԲԱԳՔԻՐ՝ Մանվել Զուլայյան  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

### ՄԵԼՔՈՆՅԱՆ Ք.

Մ 537 Խորհրդա – թուրքական հարաբերությունները 1945 – 1947 թվականներին. սևծովյան նեղուցների խնդիրը և Հայկական հարցը. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2009. – 50 էջ:

Աշխատության մեջ քննարկվում է 1945 – 1947 թվականներին խորհրդա – թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամը: Լուսաբանվում են սևծովյան նեղուցների խնդիրի և Հայկական հարցի շուրջ ծավալված գործընթացները:

Գրքով կը նախատեսված է պատմաբանների և զններոցող լայն հասարակության համար:

ԳՄԴ 66.4+63.3+63.3(2Հ)

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1945 – 1947 թթ. խորհրդա – քուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամի ուսումնասիրությունն ունի զիտական խիստ արդիական նշանակություն: Հետազոտության թեման առաջին հերթին կարևորվում է սկզբովյան նեղուցների խնդրի և Հայկական հարցի շուրջ ծավալված գործընթացների դիտարկման տեսանկյունից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խորհրդա – քուրքական լարվածությանը, հատկապես հայկական հողային հարցի՝ միջազգային ասպարեզում հայտնվելու փաստին խորհրդային պատմագրության մեջ տեղ չի հատկացվել: Խորհրդային պատմաբաններն իրենց աշխատություններում ինչ–ինչ նկատառումներով խուսափել են շոշափել 1945 – 1947 թթ. խորհրդա – քուրքական հարաբերություններում առաջացած ճգնաժամը, որը պատմության մեջ հայտնի է որպես «նյարդերի պատերազմ»: Ըստ արևմտյան պատմաբանների՝ այդ տարիներին ԽՍՀՄ–ը Թուրքիայի դեմ ակտիվ գործողություններ չձեռնարկելով՝ իր քաղաքականությամբ փորձել է նրան լարվածության մեջ պահել:

Աշխատության մեջ փորձ է արվել հիմնավորել, որ ԽՍՀՄ–ը Թուրքիայի հետ հարաբերություններում ծավալապաշտական ծրագրեր հետապնդելուց բացի նպատակադրվել եր մի կողմից ապահովել երկրի սահմանային անվտանգությունը, մյուս կողմից էլ պատմական արդարությունը վերականգնելով՝ բավարարել հայերի հողային պահանջը: Այս կերպ ԽՍՀՄ–ը ցանկանում էր պատժել Անկարային Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին չեզոքության քողի տակ վարած հակախորհրդային քաղաքականության հաճար:

**ԽՍՀՄ-Ի ՈՒ ԹՈՒՐՔԻԱՅՅԻ ՄԻՋԵՎ 1945 Թ.  
ՄԱՐՏ - ՀՈՒՆԻՍ ԱՄՄԱՆԵՐԻՆ ԿԱՅԱԱՅԱԾ  
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԵՐԸ**

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի որդեգրած արտաքին քաղաքականությունը փոփոխական էր: Ըստ ամերիկյան արխիվներում պահպանված վավերագրերի՝ Թուրքիան, թեև պատերազմին չեր մասնակցում, սակայն թուրք դիվանագետների խաղը, այսպես կոչված, «վարագույրի հետևում» բավականին արտահայտիչ էր<sup>1</sup>: Չեզոքության քողի տակ Թուրքիան բացահայտորեն վարում էր հակախորհրդային քաղաքականություն՝ հօգուտ ֆաշիստական Գերմանիայի, ինչը պատերազմի ավարտից հետո հանգեցրել էր խորհրդա-թուրքական հարաբերությունների սրման: Արդյունքում, ԽՍՀՄ-ը 1945 թ. մարտի 19-ին չեղյալ է հայտարարել 1925 թ. Փարիզում կնքված խորհրդա-թուրքական բարեկամության դաշնագիրը, որից հետո երկու երկրների միջև սկսվեց «նյարդերի պատերազմ»:

1945 թ. մարտի 19-ին Սոսկվայում Թուրքիայի դեսպան Ս. Սարպերը հրավիրվել է Կրեմլ՝ ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նախարար Վ. Մոլոտովի հետ հանդիպման: Թուրքական փաստաբերի համաձայն՝ նախօրեին դեսպանը ԽՍՀՄ-ի արտգործնախարարի տեղակալ Ս. Կավթածեի հետ կայացած գրույցի ընթացքում նրան տեղեկացրել էր, որ մարտի 25-ին մեկնելու է Անկարա, ուստի ցանկացություն է հայտնել հանդիպել Վ. Մոլոտովին: Խորհրդային բյուրոկրատներին լավ ճանաչող թուրքերը չեն բացցրել, որ ռուսների «արագ արծագանքից» անհանգստացել են և փորձել են պարզել, թե ի՞նչն է դրա պատճառը՝ հասկանալով, որ «լավ բան չպետք է սպասել»<sup>2</sup>: Պատերազմը մոտենում էր իր հանգուցալուծմանը,

<sup>1</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde Türkiye, Ankara, 1987, s. 27.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 289:

ավարտվում էր նաև 1925 թ. ԽՍՇ-ի և Թուրքիայի միջև ստորագրված բարեկամության համաձայնագրի ժամկետը: Օգտվելով դրանից՝ ԽՍՇ-ի արտգործնախարարը Թուրքիայի դեսպանին ընդունել է «օռւսական սարնասրությամբ, բայց նրբանկատորեն»<sup>3</sup> և տեղեկացրել, որ Խորհրդային Միությունը մտադիր է չեղյալ հայտարարել 1925 թ. կնքված բարեկամության պայմանագիրը<sup>4</sup>: Նկատենք, որ այս դաշնագրի ստորագրումից հետո այն երեք անգամ՝ տարբեր ժամկետներով երկարաձգվել է: Տարիների ընթացքում դրանք լրացվել են, ավելացվել են նոր հավելվածներ, որոնք կարգավորում էին երկու երկրների միջև ծագած տարարնույթը խնդիրները: Վերջին անգամ այն երկարաձգվել էր 1935 թ. նոյեմբերի 7-ին՝ 10 տարով, այսինքն՝ մինչև 1945 թ. նոյեմբերի 7-ը: Պայմանագրի համաձայն՝ կողմները պարտավորվել էին այն չերկարաձգելու դեպքում նախօրոք՝ վեց ամիս շուտ, այդ մասին իրար տեղեկացնել: Ըստ այդմ, Խորհրդային Միությունը, ինչպես նախատեսված էր, մարտին արդեն բուրքական կողմին տեղյակ է պահել այդ համաձայնագրի ժամկետը չերկարաձգելու մասին՝ պատճառարանելով, որ աշխարհաքաղաքական իրավիճակը լիովին փոխվել է, և որ իրենք ցանկանում են փոփոխություն նացնել պայմանագրում: Հայտարարության մեջ ասվել է. «Խորհրդային կառավարությունը Թուրքիային հայտնում է այս դաշնագիրը խօսելու իր ցանկությունը՝ պահպանելով 1935 թ. նոյեմբերի 7-ի փաստաթղթով նախատեսված դաշնագրի խօսնան պայմանները»<sup>5</sup>: Հանդիպման ժամանակ Թուրքիայի դեսպանը փորձել է պարզել, թե խոնդք ի՞նչ փոփոխությունների մասին է, սակայն պատասխանի չի արժանացել: ԽՍՇ-ի արտգործնախարարը հայտարարել է. «Նախ, հաճելի է իմանալ Անկարայի արձագանքն այս որոշման վերաբերյալ, որից հետո էլ կիսունք նախապայմանների մասին»<sup>6</sup>:

<sup>3</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 289.

<sup>4</sup> Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, т. III, М., 1947, с. 146.

<sup>5</sup> Известия (Москва), 25. III. 1945.

<sup>6</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 290.

Նման զարգացումներից անակնկալի եկած պաշտոնական Անկարան փորձել է երկրի ներսում թաքցնել տեղի ունեցածը: Մինչ անզիհական նամուլը բուռն քննարկումներ էր ծավալել կատարված իրողության շուրջ, թուրքականը, հետևելով կառավարության հրամանին, լրում էր<sup>7</sup>: Թուրքական կողմը միայն 18 օր անց՝ 1945 թ. ապրիլի 7-ին է արձագանքել Խորհրդային Միության հայտարարությանը: Թուրքիայի կառավարությունը Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովին տեղեկացրել է, որ ընդունում են 1925 թ. պայմանագրի չերկարաձգելու ԽՍՀՄ-ի որոշումը և պատրաստ են կնքել նոր համաձայնագիր՝ ցանկացած պայմանով: Մոսկվայից Անկարա ժամանած Թուրքիայի դեսպան Ս. Սարպերի և ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովի միջև սկսվել են ոչ պաշտոնական բանակցություններ, որոնց արդյունքում կողմերը համաձայնության են գալիս, որ նոր համաձայնագիրն իր եռթյամբ չի տարբերվելու նախորդից<sup>8</sup>: Դրանից հետո Սարպերը վերադարձել է Մոսկվա և հունիսի 7-ին հանդիպել ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Սոլոտովի հետ: Սակայն հանդիպման ժամանակ, ի պատասխան թուրքական կողմի այն հայտարարության, թե իրենք պատրաստ են Մոսկվայի հետ նոր համաձայնագիր կնքել ցանկացած պայմանով, ԽՍՀՄ-ի արտգործնախարարը շտապել է Անկարայացնել իր երկրի պահանջները՝ տեղեկացնելով, որ մինչև նոր համաձայնագիր ստորագրելն անհրաժեշտ է լուծել ինչպես սկզբված նեղուցների հարցը, այնպես էլ կարգավորել խորհրդա – թուրքական սահմանը<sup>9</sup>: Սահմանների կարգավորում ասելով՝ նկատի էր առնվում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Կարսի և Արդահանի վերադարձը ԽՍՀՄ-ին: Սա պատերազմի տարիներին Անկարայի վարած հակախորհրդային քաղաքականության դիմաց Խորհրդային Միության Անկարայացրած խաղաքարտն էր, այն հաշիվը, որից

<sup>7</sup> Նոյն տեղում:

<sup>8</sup> Zubok V., Pleshakov C., Inside the Kremlin's Cold War. From Stalin to Khrushchev. Harvard University Press, 1996, p. 91.

<sup>9</sup> Родионов А., Записки послы СССР в Турции 1974–1983 гг. – Новая и новейшая история, М., 1999, № 1, с. 126.

այդքան վախենում էին թուրքերը: Եվ չնայած Թուրքիան ծգտում էր վերականգնել խորհրդա – թուրքական պայմանագիրը, սակայն ոչ ամենին նեղուցների ու այս հողերի հաշվին. Ներկայացված պահանջներն անընդունելի էին թուրքերի համար:

ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովի և Թուրքիայի դեսպան Ս. Սարպերի այս հանդիպման ժամանակ վերջինս բարկացած հայտարարել է, թե արված առաջարկներից և ոչ մեկը թուրքական կառավարությունը չի ընդունի, այնուհետև հիշեցրել է, որ «սահմանների կարգավորման դաշնագիրը խորհրդային Սիության համաձայնությամբ կնքվել է 1921 թ. (խոսք Կարսի պայմանագրի մասին է. – Ք.Ս.)»<sup>10</sup>: Ի պատասխան Մոլոտովն ասել է. «Բայց այդ ժամանակ խորհրդային Սիությունը թույլ էր, իսկ այժմ ուժեղ է: Այդ պատճառով էլ համաձայնագրում փոփոխության առաջարկ է արվել»<sup>11</sup>:

Հանդիպումից անմիջապես հետո Թուրքիայի դեսպանը հեռագիր է ուղարկել Անկարա, որում ներկայացվում էր ԽՍՀՄ-ի առաջ քաշած պահանջները<sup>12</sup>: Միաժամանակ՝ նույն օրը, Վ. Մոլոտովը նույնաբովանդակ հեռագիր է հղել Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովին<sup>13</sup>: Հունիսի 12-ին էլ Թուրքիայի վարչապետ Շ. Սարաջօղուն ԱՍՍ-ի դեսպան է. Վիլսոնին մանրանասներ է հայտնել մոսկովյան բանակցությունների մասին: ԱՍՍ-ի դեսպանն իր կառավարությանն ուղղված գեկույցում գրել է, թե ԽՍՀՄ-ի պահանջները Թուրքիայում լուրջ քննարկման է դրվել, և որ Անկարան պատրաստվում է Մոլոտովի հետ հաջորդ հանդիպմանը<sup>14</sup>:

<sup>10</sup> Архив внешней политики Российской Федерации (далее – АВП РФ), ф. 06, оп. 7, п. 2, д. 31 (Из дневника В. Молотова. Прием посла Турецкой Республики С. Сарпера. 07. 06. 1945 г.), л. 1–2.

<sup>11</sup> Նոյն տեղում:

<sup>12</sup> Akalın C., Soğuk Savaş ABD-Türkiye-1. Olaylar –Belgeler 1945–1952, İstanbul, 2003, s. 198.

<sup>13</sup> Гасанлы Дж., ССРР – Турция: от нейтралитета к холодной войне. 1939–1953, М., 2008, с. 407.

<sup>14</sup> Նոյն տեղում:

Կողմերի միջև երկրորդ հանդիպումը կայացել է հունիսի 18-ին: ԽՍԴՍ-ի արտգործնախարարը դեսպան Սարպերին կրկին հայտնել է, թե իրենց երկրների միջև կնքվելիք նոր դաշինքը հնարավոր է միայն հունիսի 7-ին ներկայացված պահանջների ընդունման դեպքում՝ պատճառաբանելով, թե Խորհրդային Հայաստանը հողի կարիք ունի<sup>15</sup>: Ըստ փաստաթղթերի՝ հանդիպման վերջին բոպեները բավականին լարված են եղել: Ավելի ուշ՝ հունիսի 22-ին, Անկարայում ԽՍԴՍ-ի դեսպան Ս. Վինոգրանովը Թուրքիայի կառավարությանը մեկ անգամ էլ է տեղեկացրել, որ պաշտոնական Սոսկվայի տեսակետը չի փոխվել, և որ նա պատրաստ է նոր համաձայնագիր կնքել, եթե Անկարան ընդունի առաջադրված պյամանները<sup>16</sup>: Ըստ թուրք պատճառաբան Ա. Ղելիօրմանի՝ Վինոգրանովը նշել է, որ Թուրքիայից պահանջվող կարսը և Արդահանն անհրաժեշտ են ոչ թե Խորհրդային Ռուսաստանին, այլ Խորհրդային Հայաստանին, քանի որ վերջինիս տարածքը շատ փոքր է<sup>17</sup>: Պաշտոնական Անկարան, իր հերթին, հունիսի 22-ին հայտարարել է, որ չի կարող ընդունել նման պահանջներ, որոնք ուժնահարում են Թուրքիայի շահերը<sup>18</sup>:

Նման պյամաններում, հասկանալի է, Թուրքիան հայտնվել էր դժվարին իրավիճակում, որից դուրս գալու համար նրան անհրաժեշտ էր հզոր դաշնակից, որը կարող էր դիմակայել Խորհրդային Միությանը: Թուրքիայի համար նման դաշնակիցներ են դարձում Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը: Թեպետ վերջիններս սկզբնական շրջանում խորհրդա – թուրքական հարաբերություններում փորձում էին չեզոքություն պահպանել, սակայն պատերազմից հետո Մեծ տերությունների դեկավարների միջև կայացած հանդիպումների ընթացքում (և ֆորմալ, և ոչ ֆորմալ ձևով) քննարկվել են Խորհրդային Միությունը և Թուրքիայի միջև պահպանական համաձայնագիրը<sup>19</sup>:

<sup>15</sup> АВП РФ, ф. 06, оп. 7, п. 2, д. 31 (Из дневника В. Молотова. Прием посла Турецкой Республики С. Сарпера. 18. 06. 1945 г.), л. 33.

<sup>16</sup> Ազդակ (Թեյրութ), 11. V. 1993:

<sup>17</sup> Deliorman A., Türkler Karşı Ermeni Komiteciler, İstanbul, 1973, s. 206.

<sup>18</sup> Российско – турецкие отношения: история, современное состояние и перспективы, М., 2003, с. 59.

թյան՝ Թուրքիային ներկայացրած ինչպես սկզբվան նեղուցների, այնպես էլ հայկական հողերի վերադարձի հարցերը:

ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացված պահանջները Մեծ տերությունների միջև առաջին անգամ քննարկվել է 1945 թ. Պոտսդամում: Նախ, Թուրքիային ներկայացված տարածքային պահանջների հարցը բարձացվել է 1945 թ. հուլիսի 16-ին ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարների առանձնագրույցի ընթացքում, այնուհետև քննարկումը նույն ոգով շարունակվել է հուլիսի 23-ին Պոտսդամում՝ Ստալին-Չեռչիլ-Սրումեն հանդիպման ժամանակ: Քննարկումների ընթացքում սկզբվան նեղուցների նոր ռեժիմի հաստատման վերաբերյալ առաջարկներ են ներկայացրել ինչպես խորհրդային, այնպես էլ՝ անգլո-ամերիկյան կողմը: Վերջնական որոշում, սակայն, այդպես էլ չի ընդունվել, քանզի կողմերի միջև տարածայնությունները մեծ էին: Երեք երկրների ղեկավարները միակարծիք էին այն հարցում, որ 1936 թ. կնքված Մոնտրոյի համաձայնագիրն իրեն չի արդարացրել և որ այն անհրաժեշտ է վերանայել: Նրանք պարտավորվել էին դրա շուրջ առանձին-առանձին բանակցել Թուրքիայի հետ<sup>19</sup>: Թուրքերին անհանգստացնող խորհրդա – բուրքական նոր սահմանի գծման հարցը ևս Պոտսդամում իր լուծումը չի ստացել: Մեծ տերությունները որոշել են այն բողնել երկու երկրների հայեցողությանը, այսինքն՝ հարցը պետք է լուծվեր երկկողմ բանակցությունների ընթացքում:

Այսպիսով՝ Թուրքիային ներկայացրած ԽՍՀՄ-ի պահանջները դուրս եկան երկու երկրների քննարկման շրջանակից և հայտնվեցին Մեծ տերությունների բանակցային սեղանին:

<sup>19</sup> Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, М., 1980, с. 136.

## ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԵՐԿՈՒՑՆԵՐԻ ՀԱՐՑԸ

1945 թ. ամռանը խորհրդա – թուրքական հարաբերությունների օրակարգում սևծովյան նեղուցների հարցի հայտնվելը ոչ Թուրքիայի, ոչ էլ ԱՍՍ-ի և Մեծ Բրիտանիայի համար ամենակին անակնկալ չէր: Սակայն Պոտսդամում վերջիններս եկել են այն համոզման, որ Թուրքիային խորհրդային Սիոնթյան ներկայացրած պահանջները լուրջ բնույթ են կրում և կարող են աշխարհաքաղաքական ծանր հետևանքներ ունենալ: Ավելին՝ 1945 թ. ընթացքում պարզ դարձավ, որ սևծովյան նեղուցների հարցում Մեծ տերությունների միջև տարածայնությունները մեծ էին: Կողմներից ոչ մեկը չէր պատրաստվում զիջումների գնալ: Խորհրդային Սիոնթյան ներկայությունը նեղուցների տարածքում ցանկալի չէր ոչ միայն Թուրքիայի, այլև Մեծ Բրիտանիայի ու ԱՍՍ-ի համար: ԽՍՀՄ-ի կողմից Անկարային ներկայացված սևծովյան նեղուցների հարցին առնչվող վերջիններիս հայտարարագրերը դա են վկայում:

Խնդրո առարկա հարցում Մեծ տերությունների միջև հայտարարագրերի փոխանակումը հիմնական էական գործընթացն էր: Այս հարցում առաջ անցնելով շահագրիր երկու կողմներից՝ ԽՍՀՄ-ից և Մեծ Բրիտանիայից, 1945 թ. նոյեմբերի 2-ին Անկարային առաջինը հայտարարագրիր է ներկայացրել Վաշինգտոնը<sup>20</sup>: Միայնակ և առաջինը այդ փաստաթղթում նշում են, որ սևծովյան նեղուցների անվտանգությամբ Թուրքիայից բացի հետաքրքրված են նաև սևծովյան պետությունները, ուստի, առաջարկում էր այդ հարցը քննարկելու նպատակով մի նոր կոնֆերանս իրավիրել: Ամերիկյան կողմը հայտարարագրում առաջարկում էր հաշվի առնել հետևյալ դրույթները.

<sup>20</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 296.

- Անդուցները պետք է միշտ բաց լինեն առևտրական բոլոր նավերի առջև,
- Անդուցները պետք է միշտ բաց լինեն սևովյան երկրների ռազմական նավերի համար,
- Անդուցներից ոչ սևովյան պետությունների ռազմական նավերի անցումը, բացառությամբ հատուկ դեպքերի կամ էլ առանց ՄԱԿ-ի բոլյատվության, արգելվում էր<sup>21</sup>:

Ի դեպ, Անդուցների հարցի լուծման այս տարերակը ԱՍՍ-ի նախագահ Յ. Տրումենը, ստանալով Զերչիլի հաճածայնությունը, ներկայացրել էր դեռևս «Պոտսդամում»:<sup>22</sup> Դա հինարավորություն էր տալիս ապահովել Անդուցներով սևովյան երկրների ռազմանավերի ազատ անցումը «բոլոր ժամանակներում»: Աներիկյան կողմի առաջարկը, սակայն, չէր արժանացել Ստալինի հավանությանը, քանի որ դրանում տեղ չէր գտել խորհրդային կողմի՝ Թուրքիայի հետ Անդուցների վերահսկումը իրականացնելու պահանջները:

Սևովյան Անդուցների հարցում Մեծ Բրիտանիան նույնպես հանդես էր գալիս Թուրքիայի պաշտպանի դերում: 1945 թ. նոյեմբերի 22-ին Անկարային ներկայացրած Լոնդոնի հայտարարագիրը այնքան էր նճան ամերիկյանին, որ թուրք հեղինակներն այդ փաստաթուղթը որակել են որպես «ամերիկյան կրկնօրինակ»<sup>23</sup>: Ու վկայում էր, որ Անդուցների հարցում երկու կողմն էլ համակարծիք են: Սակայն, նկատենք, որ Մեծ Բրիտանիան Թուրքիայում արդեն իր դիրքերը զիջում էր, փոխարենն ԱՍՍ-ն էր ամրապնդվում այս տարածաշրջանում: Եթե պատերազմի տարիներին ամերիկյան դիվանագետների զեկուցագրերը իրենց կառավարությանը միայն դիտարկումների բնույթ էին կրում, ապա պատերազմից հետո ներկայացված փաստաթղթերում մշակվում էին այն հնարավոր բոլոր քայլերը, որոնք ծեռնտու էին Թուրքիային: Այսպես, ԱՍՍ-ի պետքարտուղարության միջազգային կազմակերպություննե-

<sup>21</sup> Erkin F., Türk- Sovyet ilişkileri ve Boğazlar, Ankara, 1968, s. 415.

<sup>22</sup> Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, с. 134.

<sup>23</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 297.

րի բաժնի աշխատակից Յ. Յարվորդի կողմից 1945 թ. դեկտեմբերի 19-ին պատրաստված «Նեղուցների հարցի վերաբերյալ» գեկուցագրում ասվում էր. «ԱՄՆ-ը Մոնտրոյի համաձայնագիրը նորից վերանայել է առաջարկել: Թուրքական պատվիրակությունը խորհրդային պահանջին ընդառաջ գնալով՝ այս հարցը վերջնական ձևով կարող է առաջադրել ՄԱԿ-ի Գլխավոր խորհրդում կամ Անվտանգության հանձնաժողովում:

Այդ դեպքում, ԱՄՆ-ի պատվիրակությունը կողմերին խորհուրդ կտա ՄԱԿ-ի սահմանադրության համաձայն հարցը լուծել բանակցությունների միջոցով»<sup>24</sup>:

1946 թ. մարտի 18-ին էլ թուրքական «Վաքիր» թերթը տեղեկացրել է, որ Վաշինգտոնը Անկարային ու Թեհրանին երաշխիքներ է տվել անվտանգության հարցում, վստահեցնելով, որ վերջիններիս կապաշտապանն արտաքին ուժերի հարձակումներից, այսինքն՝ ԽՍՀՄ-ի նվաճողական ծրագրերից<sup>25</sup>:

Աևովյան նեղուցների վերաբերյալ առաջին հայտարարագիրը ԽՍՀՄ-ը հղել է Թուրքիային 1946 թ. օգոստոսի 7-ին: Առաջարկելով վերանայել 1936 թ. Մոնտրոյի համաձայնագիրը՝ նատնանշվում էր, թե Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տվյալ ռեժիմն իրեն չի արդարացրել և չի ապահովել սկզբովյան նեղուցների անվտանգությունը: Քիմնականում անդրադառնալով պատերազմի ընթացքում Թուրքիայի կողմից Մոնտրոյի համաձայնագրի խախտման բազմաթիվ դեպքերին և ժամանակին Սոսկվայի հղած բողոք՝ նոտաներին, փաստարդում նասնակորապես ասվում էր. «Բերված փաստերից երևում է, որ Գերմանիայի ու նրա դաշնակիցների դեմ մղված՝ անցած պատերազմի ընթացքում նեղուցների վերաբերյալ համաձայնագիրը թշնամական պետություններին չխանգարեց նեղուցներն օգտագործելու ռազմական նպա-

<sup>24</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 299-300.

<sup>25</sup> «ՀԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946, После сообщения об американской гарантии, «Вакит», с. 27.

տակներով՝ ընդդեմ Խորհրդային Միության և դաշնակից այլ պետությունների. ըստ որում, թուրքական կառավարությունը չի կարող պատասխանատվություն չկրել նճան վիճակի համար»<sup>26</sup>: Խորհրդային կողմը բաց չէր թողել պահը թուրքերին հիշեցնելու, որ պաշտոնական Մոսկվան պատերազմի տարիներին հայտարարագրերով բազմից դիմել է Թուրքիային, պահանջելով փակել նեղուցների մուտքը գերմանական ու իտալական նավերի առջև: Վերջինս, սակայն, անտեսելով այդ նախազգուշացումները՝ շարունակել է աջակցել առանցքի Երկրներին:

Ըստ այդմ, հայտարարագրում ԽՍՀՄ-ը թուրքական կողմին առաջարկում էր հաստատել նեղուցների նոր ռեժիմ, որը բխում էր հետևյալ դրույթներից.

- Նեղուցները միշտ պետք է բաց լինեն բոլոր Երկրների առևտրական նավերի համար,
- Նեղուցները միշտ պետք է բաց լինեն սկզբովյան պետությունների ռազմանավերի համար,
- Նեղուցներով ոչ սկզբովյան պետությունների ռազմանավերի անցումը, բացառությամբ հատուկ դեպքերի, պետք է արգելվի,
- Նեղուցներից օգտվելու կանոնակարգի սահմանումը պետք է մտնի Թուրքիայի և սկզբովյան մյուս Երկրների իրավասության մեջ,
- Թուրքիան և Խորհրդային Միությունը, որպես նեղուցներում առևտրական նավազնացությունն ու դրանց անվտանգությունն ապահովելու մեջ ամենից ավելի շահագործված պետություններ, համատեղ միջոցներով պետք է կազմակերպեն նեղուցների պաշտպանությունը՝ ուրիշ տերությունների կողմից սկզբովյան պետությունների դեմ

---

<sup>26</sup> Սահակյան Ռ., Սովետա - թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը՝ Ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Երևան, 1964, էջ 112-113:

թշնամական նպատակներով դրանց օգտագործումը կան-  
խելու համար<sup>27</sup>:

Այսինքն, ԽՍՀՄ-ը պահանջում էր, որ Թուրքիան և  
Խորհրդային Միությունը համատեղ իրականացնեն սկզբյան  
նեղուցների վերահսկումը: Ավելին, խորհրդային այս հայտա-  
րարագիրը իր բնույթով վերջնագիր էր հիշեցնում: Թուրքական  
մամուլն էլ չէր սխալվում, երբ նշում էր, որ նեղուցների վե-  
րաբերյալ այս հայտարարագիրը խորհրդային պահանջներն  
արտահայտող «պաշտոնական առաջին փաստաթուղթն է»<sup>28</sup>:

1946 թ. օգոստոսի 19-ին ԱՄՆ-ի պետքարտութարու-  
թյունը Կաշինգտոնում ԽՍՀՄ-ի գործերով հավատարմատա-  
րին է հանձնել օգոստոսի 7-ի հայտարարագրի պատասխա-  
նը: Դրանում ասվում էր, որ խորհրդային կողմի առաջարկած  
սկզբունքների նկատմամբ ամերիկյան դիրքորոշումը պարզ  
կդառնա այն բանից հետո, երբ համեմատվեն թուրքական կա-  
ռավարությանն ուղղված՝ 1945 թ. նոյեմբերի 2-ի ամերիկյան և  
1946 թ. օգոստոսի 7-ի խորհրդային հայտարարագրերը<sup>29</sup>: Անգլիական կողմն էլ ԽՍՀՄ-ի հայտարարագրին պատասխա-  
նել է օգոստոսի 21-ին: Այնտեղ նշված էր, որ «Նեղուցների ռե-  
ժիմը պետք է համապատասխանի Միավորված ազգերի կագ-  
մակերպության նպատակներին և սկզբունքներին»<sup>30</sup>:

Երբ համեմատում ենք Մեծ Թերությունների վերոհիշյալ  
հայտարարագրերը, ապա պարզվում է, որ խորհրդային կող-  
մի առաջարկած հինգ սկզբունքներից երեքի վերաբերյալ  
ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան համակարծիք էին: Բա-  
նավեճն ընթացել է վերջին IV և V կետերի շուրջ: ԱՄՆ-ն և Մեծ  
Բրիտանիան դեմ էին նեղուցների տարածքում խորհրդային

<sup>27</sup> Սահակյան Ռ., Սովետա – թուրքական հարաբերությունների պատմության..., էջ 112-113:

<sup>28</sup> «ՀԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ, Օբзор турецкой прессы, июль–ноябрь, 1946, Высказывания печати по вопросу проливов, с. 31.

<sup>29</sup> Hurewitz J., Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record 1914-1956, vol. II, New York, 1972, p. 270-271.

<sup>30</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 298.

ազդեցության մեծացմանը: Ըստ ամերիկյան կողմի, առաջարկված IV դրույթը չէր կարող ընդունվել, քանի որ «նեղուցների ռեժիմի հարցը գտնվում է ոչ միայն սկզբյան, այլև նաև այլ տերությունների, ներայալ և Միացյալ Նահանգների մտահոգությունների շրջանակում»<sup>31</sup>: Բրիտանական կողմն էլ հիշեցնում էր, թե «միջազգայնորեն վաղուց ընդունված է, որ նեղուցների ռեժիմում, բացի սկզբյան տերություններից, շահագրգորված են նաև մյուս երկրները»<sup>32</sup>: Ինչ վերաբերում է V կետին, ապա այդ հարցում ևս այս երկու պետությունները համակարծիք էին, այն է՝ ԽՍՀՄ-ը Թուրքիայի հետ համատեղ չի կարող իրականացնել նեղուցների վերահսկումը և վերջինս պետք է շարունակի մնալ նեղուցների պաշտպանության հիմնական պատասխանատուն: ԱՄՆ-ի կարծիքով նեղուցների շուրջ ծագած խնդիրները պետք է լուծվեր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի շրջանակում<sup>33</sup>.

Այսպիսով, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հայտարարագրերից պարզ է դառնում, որ նեղուցների խնդիրը դուրս էր Եկեղի ԽՍՀՄ-ի և Թուրքիայի հետաքրքրության շրջանակից: Այդ հարցում ԱՄՆ-ը և Անգլիան էլ էին արդեն հանդիսանում շահագրգորված կողմ, ինչը Թուրքիային բույլ էր տալիս առանց վախիս գգացումի մերժել Խորհրդային Միության առաջարկները: Այդ առիթով պատճաբան Թ. Ռինալը նշել է. «Թուրքական կառավարությունն անզլիական և ամերիկյան կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո խորհրդային պահանջները մերժեց»<sup>34</sup>: Այլ կերպ ասած՝ Անկարան, չվախենալով միջազգային ասպարեզում ԽՍՀՄ-ի դեմ միայնակ մնալուց, Վաշինգտոնից և Լոնդոնից հետո՝ վերջինն է Մոսկվային ներկայացրել իր պատասխան ուղղերձը:

Թուրքիան իր պատասխանը ԽՍՀՄ-ին հղել է 1946 թ. օգոստոսի 22-ին: Դրանում բերելով անհիմն բացատրու-

<sup>31</sup> Hurewitz J., Diplomacy in the Near and Middle East..., p. 270-271.

<sup>32</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 301.

<sup>33</sup> Hurewitz J., Diplomacy in the Near and Middle East..., p. 271.

<sup>34</sup> Սահակյան Ռ., Սովետա – թուրքական հարաբերությունների պատմության..., էջ 115:

թյուններ՝ Աճկարան փորձում է արդարացնել պատերազմի տարիներին իր վարած քաղաքականությունը: Թուրքական փաստաթուղթը նախևառաջ հերքում էր խորհրդային կողմի ներկայացրած այն փաստերը, թե Փաշչիստական բլոկի երկրների ռազմական նավերն առևտրական դրոշի ներքո քողարկված ազատ ելումուտ են արել սկզբվան նեղուցներով: Ինչ վերաբերում է խորհրդային հայտարարագրում բարձրացված հարցի բուն եռթյանը, ապա թուրքական կառավարությունը, որոշ վերապահումներով, քննարկման համար հիմք էր ընդունում առաջին երեք կետերը՝ ընդգծելով, որ դրանք կրկնում են համաձայնագիրը ներկայիս պայմաններին հարմարեցնելու վերաբերյալ 1945 թ. նոյեմբերի 2-ին ԱՄՆ-ի արած առաջարկները: Դետևելով ԱՄՆ-ին ու Անգլիային՝ Թուրքիան և մերժում էր IV ու V կետերը՝ միաժամանակ պատճառարանելով, թե ինչու չեն կարող ընդունել ԽՍՀՄ-ի առաջարկները: Ըստ թուրքական կողմի՝

- համաձայնագրի վերանայումը բացառում է նոր ռեժիմի մշակումը, որի ընդհանուր կառուցվածքը կտարբերվեր Մոնտրոյի ռեժիմից,
- խորհրդային հայտարարագրում անտեսվում են կոնվենցիայի անդամ մյուս երկրների շահերը,
- նեղուցների համատեղ պաշտպանության վերաբերյալ խորհրդային առաջարկն անընդունելի է պետական և ազգային տեսանկյունից, քանի որ դա կնշանակեր Թուրքիայի անվտանգության ոչնչացում:

Հայտարարագրում Թուրքիայի կառավարությունը խորհրդային կողմին կոչ էր անում վերականգնել բարեկամական հարաբերությունները, ինչը Սև ծովում ԽՍՀՄ-ի անվտանգության երաշխիքն է: Ինչ վերաբերում է Թուրքիայի անվտանգությանը, ապա նշվում էր, որ դրա երաշխիքը ՍԱԿ-ի միջազգային ուժերն են<sup>35</sup>:

ԽՍՀՄ-ի հայտարարագրին տված թուրքական կողմի այս պատասխանով ավարտվում էր սկզբվան նեղուցների շուրջ

<sup>35</sup> Vali Ferenc A., The Turkish Straits and NATO, Stanford, 1972, p. 255-265.

սկսված քննարկումների առաջին փուլը: Այն կարևորվում է նրանով, որ պարզաբանում էր ոչ միայն ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի, այլև խնդրո առարկա հարցի շուրջ շահագրգիռ նյուս կողմերի՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը: Անկարան, Վաշինգտոնը և Լոնդոնը գիտակցում էին, որ հարցի շուրջ հետագա զարգացումների ընթացքը կախված է Սոսկվայի քայլերից: Այդ առիթով բուրքական մանուլը տարբեր կանխատեսումներ էր անում, ենթադրելով, որ՝

- A 95163
1. Խորհրդային Միությունը կիրաժարվի իր պահանջներից և, որպես հիմք ընդունելով ամերիկյան առաջարկները, որի հետ համամիտ է և Թուրքիան, կիամաձայնվի նաև ակցել սկզբովյան նեղուցների հարցի առնչությամբ հրավիրված նիշազգային խորհրդաժողովին,
  2. ԽՍՀՄ-ը կշարունակի ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որի արդյունքում հնարավոր է պատերազմի սանձագերծում,
  3. ԽՍՀՄ-ը ոչ կիրաժարվի, ոչ էլ ճնշում կգործադրի, այլ նեղուցների հարցը կպահի օդում կախված<sup>36</sup>:

Վերլուծելով այս վարկածները՝ բուլը լրագրողներն այն եզրակացությանն էին հանգել, որ շատ թիշ է հավանականությունը, թե իրադարձությունները կզարգանան 1-ին և 2-րդ կետերի սցենարների հիման վրա: Նաև բացառվում էր, որ Խորհրդային Միությունը կիրաժարվի իր պահանջներից, քանի որ այդ դեպքում կիելինակազրկվեր միշազգային ասպարեզում, այն էլ այժմ, եթե հայտնվել է «գերտերության» կարգավիճակում: Դասկանալի է, որ Անկարան նախընտրություն էր տալիս հարցի լուծման առաջին տարբերակին՝ պատճառաբանելով, թե միայն նման պարագայում հնարավորություն կլինի վերականգնել խորհրդա – բուրքական հարաբերություններն ու ապահովել նեղուցների անվտանգությունը: Նկատենք, որ սա միակ միջոցն էր նաև Թուրքիայի համար՝

<sup>36</sup> «ՀԱՍ Արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օճշոր տүրեկոյ պրեսսы, նոյն–հունվար, 1946. Վысказывания печати по вопросу проливов, с. 38.

ստեղծված իրավիճակից «առանց վնասների» դուրս գալու։ Ինչ վերաբերում է 2-րդ կետին, ապա թուրքական մաճուլը նշում էր, թե հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմը նոր է ավարտվել, և ԽՍՀՄ-ը դեռևս չի վերականգնել իր ուժերը, պատերազմ սկսելու վարկածը ևս հավանական չէր հաճարվում։ Ըստ թուրքերի՝ խորհրդային կողմը նախընտրություն էր տալու 3-րդ վարկածին՝ պնդելով, որ դա բխում է հենց ԽՍՀՄ-ի շահերից<sup>37</sup>։

Խորհրդային կառավարությունը սկսովյան նեղուցներին վերաբերող Երկրորդ հայտարարագրով Թուրքիային դիմել է 1946 թ. սեպտեմբերի 24-ին<sup>38</sup>։ Փաստաթղթում Մոսկվան չի դադարում Անկարային մեղադրել Սոնտրոյի համաձայնագրի խախտման, նեղուցներով ֆաշիստական բլոկի Երկրների նավերի անցումը թույլատրելու մեջ, բացի այդ չին ընդունվում թուրքական կողմի՝ այդ հարցի հետ կապված բացատրությունները։ Դայտարարագրում նշվում էր, որ իրականությանը չեն հանապատասխանում Թուրքիայի այն բոլոր պնդումները, թե, իբր, նեղուցներով թշնամական նավերի անցումը սպասնալիքի տակ չէր դնում ԽՍՀՄ-ի անվտանգությունը, թե Թուրքական կողմը իրեն լիովին արդարացրել է նեղուցների պահակի դերում, և թե Թուրքիայի շնորհիվ առանցքի Երկրները չեն հանդգնել խախտելու նեղուցների կանոնակարգը։ Դայտարարագրում հարց էր տրվում, ապա այդ դեպքում պատերազմի տարիներին ինչու՞ էր խորհրդային զինված ուժերի գլխավոր շտաբը սկսովյան շրջանի պաշտպանության նպատակով հարկադրված ռազմական գործողությունների գլխավոր ուղղությունից զգալի քանակությամբ զինված ուժեր հանել։ Ըստ խորհրդային կողմի՝ դա վկայում է, որ Մոնտրոյի համաձայնագիրն այլևս չի համապատասխանում սկսովյան Երկրների անվտանգության շահերին, ուստի կրկին առաջարկվում էր նեղուցներով անցուղարձի նոր ռեժիմը համաձայնեցնել ինչպես Թուրքիայի, այնպես էլ սկսով-

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>38</sup> Внешняя политика СССР, т. VI, М., 1962, с. 664.

յան երկրների հետ: Խորհրդային Միությունը հիշեցնում էր, որ Սև ծովը փակ ծով է, ըստ այդ՝ նեղուցները ծովային միակ ճանապարհն են սևովյան պետությունների համար: Այսպես որ, ԽՍՀՄ-ի և մյուս երկրների կենսական շահերից է բխում, որ Խորհրդային Միությունը ևս անմիջականորեն մասնակցի նեղուցների պաշտպանությանը: Դայտարարագրում նշվում էր, որ ԽՍՀՄ-ի հետ համատեղ նեղուցների պաշտպանությունից Թուրքիայի իրաժամկեց սևովյան տերություններին գրկում է տարածաշրջանում պատշաճ մակարդակի անվտանգություն ապահովելու և երաշխավորելու հնարավորությունից: Փաստաթղթում նաև ասվում էր, որ Մոսկվան կողմն է սևովյան նեղուցների հարցի քննարկման նպատակով խորհրդաժողով հրավիրելու<sup>39</sup>:

Թուրքերի զնահատմամբ՝ իրենց ներկայացված այս երկրորդ փաստաթուղթը չէր տարբերվում առաջինից և կրկին վերջնագիր էր հիշեցնում: Պատմաբան Թ. Ունալի կարծիքով՝ խորհրդային կողմի ներկայացրած այս երկու հայտարարագրերը վկայում են, որ նեղուցների հարցում ԽՍՀՄ-ը վերադարձել է ցարիզմի քաղաքականությանը և, իբր, դա է պատճառը, որ Թուրքիան խզել է իր հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ թեքվելով դեպի ժողովրդավարական աշխարհը<sup>40</sup>: Թուրքական մասում կիսում էր այդ կարծիքը:

Այս անգամ ևս առաջինը Մեծ տերություններն են արձագանքում ԽՍՀՄ-ի հայտարարագրին և քացահայտորեն շարունակում պաշտպանել Թուրքիայի շահերը: 1946 թ. հոկտեմբերին 9-ին Կաշինգտոնի պատասխան հայտարարագրը չէր տարբերվում նախորդից և կրկին հաստատում էր, որ ԱՍՍ-ն հետագայում էլ է առաջադրելու այն նույն դրույթները, որոնք շարադրված էին 1946 թ. օգոստոսի 19-ին խորհրդային կառավարության ուղղած իր հայտարարագրում: Մասնավորապես, թուրքական կողմը կիսում էր ամերիկյան այն տեսակետը, որ նեղուցների խնդիրը «վերաբերում է ոչ միայն

<sup>39</sup> Внешняя политика СССР, т. VI, с. 664-670.

<sup>40</sup> Ünal T., 1700 den 1958 e Kadar Türk Siyasi Tarih, Ankara, 1958, s. 291.

սկծովյան տերություններին, այլև մյուս պետություններին, ներառյալ և ԱՄՆ-ին»<sup>41</sup>: Ըստ այդմ՝ Թուրքիայի կառավարությունն այսուհետ էլ պետք է պատասխանատու լինի նեղուցների պաշտպանության համար, իսկ եթե նեղուցները դառնան հարձակնան կամ ազրեսորի սպառնալիքի օբյեկտ, ապա այն պետք է դառնա ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի վարույթի տակ գտնվող գործ<sup>42</sup>:

Վաշինգտոնի օրինակին հետևելով՝ պաշտոնական Լոնդոնը նույն օրը՝ հոկտեմբերի 9-ին, ԽՍՀՄ-ում իր դեսպան Մ. Զեֆերսոնի միջոցով խորհրդային կողմին է հանձնում պատասխան նամակը, որում ասվում էր՝ բրիտանական կողմը նպատակահարմար և անհրաժեշտ չի համարում հիշյալ խնդրի շուրջ նաճակագրության շարունակումը<sup>43</sup>:

Տասը օր անց էլ՝ հոկտեմբերի 18-ին, պաշտոնական Անկարան Մոսկվային հղեց իր պատասխանը, որտեղ կրկին հերքում էր Մոնտրոյի համաձայնագրի խախտման և նեղուցներով «քշնաճական նավերի» անցման վերաբերյալ խորհրդային կողմի մեղադրանքները: Թուրքիան ընդունում էր սկծովյան պետությունների շահերը պաշտպանելու նպատակով Մոնտրոյի համաձայնագրից փոփոխելու, հատկապես նեղուցներով անցման ու դրանց վերահսկողության պայմանները, նաև համաձայնագրի հավելված 2-ը վերանայելու անհրաժեշտությունը: Առաջարկվում էր համաձայնագրը քննարկել ՍԱԿ-ում, բացառել դրան նապանիայի մասնակցությունը, փոխարենը ներգրավել ԱՄՆ-ին: Թուրքիան դաշնակիցների նման չէր համաձայնվում ապագայում հնարավոր կոնֆերանսի մասնակիցների կազմի և նեղուցների համատեղ պաշտպանության վերաբերյալ ԽՍՀՄ-ի առաջարկներին: Դայտարարագրում նշվում էր, որ Թուրքիան ոչ միայն սկծովյան, այլև միջերկրածովյան տերություն է, ուստի ապագա կոն-

<sup>41</sup> Armaoğlu F., Belgelerle Türk-Amerikan Münasebetleri, Ankara, 1991, s. 150-151.

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 322.

Փերանսի մասնակիցների կազմը չի կարող սահմանափակվել սկզբվան երկրներով, իսկ նեղուցների համատեղ պաշտպանությանը թուրքական կողմի համաձայնությունը կնշանակեր սեփական ինքնիշխանության կիսում օտարերկրյա տերության հետ, ինչին Թուրքիան պատրաստ չէր:

Ըստ թուրքական կառավարության՝ Մոնտրոյի համաձայնագրի վերանայման նախապատրաստական աշխատանքները, որին այդքան ծգտում էր Պոտսդամի խորհրդաժողովը, գտնվում էին ավարտական փուլում: Թուրքերը պատրաստակամություն էին հայտնում համաձայնագիրը վերանայելու նպատակով այն ստորագրած բոլոր երկրների, բացառությամբ նապահայի, և, ընդհակառակը, ԱՄՆ-ի մասնակցությամբ նոր վեհաժողով անցկացնելու հարցում<sup>44</sup>:

Այսպիսով, ԽՍՀՄ-ին ուղղված թուրքական պատասխան հայտարարագրով կարելի է ավարտված համարել սկզբվան նեղուցների խնդրի շուրջ ծավալված քննարկումների նաև երկրորդ փուլը: Այն ևս անարդյունք էր՝ կողմերը այդպես էլ համաձայնության չեկան. դադարեցվեցին համաձայնագրերի փոխանակումը, մոռացության մասնվեց Մոնտրոյի համաձայնագրի վերանայման նպատակով նոր կոնֆերանս հրավիրելու գաղափարը: Այլ կերպ ասած՝ 1947 թ. ևս այս խնդրում փոփոխություններ չգրանցվեցին: Բացի այդ, նկատենք. հայտարարագրերի փոխանակումը հիմնականում ընթանում էր ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև, քանզի, փաստորեն, Վաշինգտոնն էր թելադրում Անկարայի հետագա քայլերը: Այս ամենն էլ հուշում է, որ ինչպես Թուրքիային, այնպես էլ ԱՄՆ-ին ձեռնտու չէր այդ տարածաշրջանում խորհրդային գինված ուժերի ներկայությունը:

<sup>44</sup> Vali Ferenc A., The Turkish Straits..., p. 278-297.

## ԽՈՐՀՐԴԱ – ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Երկարատև ընդմիջումից հետո՝ 1945 թ. սկզբին Յայկական հարցը միջազգային ասպարեզում կրկին դարձավ լայն քննարկման խնդիր: Սկզբնապես խորհրդա – բուրքական սահմանի վերանայման հարցը, թվում էր, այնքան էլ չեր հուզում Մեծ տերություններին, չնայած պատերազմի վերջին տարիներին բրիտանական դիվանագիտական շրջանակներում հայկական տարածքների խնդիր վերաբերյալ արդեն արվում էին առաջին կանխատեսումները:<sup>45</sup> 1945 թ. փետրվարին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության պատրաստած «Ուստանի արտաքին քաղաքականության պատճական միտումները» վերնագրով գեկուցագրում գնահատվում էին խորհրդա – բուրքական հարաբերությունները, նշվում, որ նրանց միջև գոյություն ունեցող խնդիրներից առաջնայինը սկսվյան նեղուցների վերահսկումն է, երկրորդականը՝ կովկասյան սահմանի փոփոխությունը: Լոնդոնը վստահ էր՝ Սոսկվան այս հարցը ևս դնելու է Անկարայի առջև<sup>46</sup>: Յետաքրին է, որ անգլիական «Էկոնոմիստ» թերթը 1945 թ. հունվարին «Ուստաստան և Միջին Արևելք» խորագրի տակ անվերապահ գրել էր. «Վերջապես խորհրդային Յայաստանը կարող է պահանջել վերանայել 1921 թ. Թուրքիայի և Ուստաստանի միջև կնքված կարսի պայմանագիրը»<sup>47</sup>.

Յարց է ծագում. ինչո՞ւ՝ միայն 1945 թ. Յայկական հարցը արդիական դարձավ: Պատասխանը մեկն է. փոխվել էր ԽՍՀՄ-ի վերաբերնունքը Թուրքիայի նկատմամբ: Խորհրդային Միության ու Թուրքիայի միջև բարեկամական նախկին հարաբերությունների մասին այլևս խոսք լինել չեր կարող:

<sup>45</sup> Служба Внешней Разведки Российской Федерации, Архив СВР России, Сборник документов (1935–1945), М., 2006, с. 168.

<sup>46</sup> The Economist (London), 23. I. 1945.

Պատերազմի տարիներին Անկարայի պահվածքին ակնդետ հետևող Մոսկվան ներկայացրել էր իր պահանջները: Այլ կերպ հնարավոր չէր. չէ<sup>47</sup> որ փոխվել էր աշխարհաքաղաքական իրադրությունը, ԽՍՀՄ-ը այևս չէր դիտվում իրեւ մեկուսացված, մի թույլ պետություն, այլ հանդես էր գալիս որպես գերտերություն, որի բանակն անպարտելի էր: Միաժամանակ խորհրդային կառավարությունը նպատակադրվել էր վերականգնել Ռուսաստանի 1914 թ. պետական սահմանները: Այդ ծրագիրն իրագործելու համար արդեն կատարել էր որոշակի քայլեր և կարողացել էր վերադարձնել կորցրած տարածքների մեծ մասը: Մնում էր միայն վերահսկատել ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության 1914 թ. պետական սահմանները: Այսինքն՝ վերադարձնել կարսն ու Արդահանը: Դա ևս հիմնավոր պատճառ էր, որ 1945 թ. հայկական հոդային հարցը կրկին արդիական դառնա: Բացի այդ, միտում կար բավարարելու խորհրդային Միության այն բոլոր հանրապետությունների պահանջները, որոնք խոչոր ներդրում էին ունեցել ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում: Այդ հանրապետությունների թվին էր պատկանում նաև խորհրդային Հայաստանը, որի միակ պահանջը Արևմտյան Հայաստանի տարածքների հարցն էր: Առաջին անգամ էր, որ խորհրդային Միության և համայն հայության շահերը համընկնում էին:

Իսկ ինչպիսի<sup>47</sup> էր պաշտոնական Անկարայի դիրքորոշումը. վերջինս պնդում էր, որ Կարսն ու Արդահանը 1921 թ. իրեն են անցել իրավական ճանապարհով, քանի որ մինչև 1877-1878 թթ. ուս – թուրքական պատերազմը այս տարածքները պատկանել են Օսմանյան Թուրքիային, իսկ 1878 թ. դրանք տրվել են ցարական Ռուսաստանին<sup>47</sup>: Այսինքն, ըստ թուրքերի, այս տարածքները «թուրքական» են, և որ այստեղ բնակվում են հիմնականում թուրքեր, ոչ թե հայեր: Թուրքական մամուլը այս առիթով գրել է, որ «խորհրդային պահանջները իրական բացահայտ ուժի քաղաքանության

<sup>47</sup> Kurztoğlu M., Kars Tarihi, İstanbul, 1953, s. 61.

անցկացում է»՝ վստահեցնելով, թե ԽՍՀՄ-ը վճռական չէ քայլերում, քանի որ վախենում է հանդիպել ուժեղ դիմադրությամ<sup>48</sup>:

Թուրքական մամուլն այս խնդրին առաջին անգամ անդրադարձել է 1945 թ. հունիսին<sup>49</sup>: «Թասվիր» թերթը գրում էր. «Միակ պատճառը, որ Ուսասատանին մտածելու տեղիք է տալիս իր գործողություններում, դա է (ուժեղ դիմադրության հանդիպելը. – Ք.Ա.): Բացի այդ, Ուսասատանը շատ լավ հասկանում է, որ ցանկացած փորձ այս ուղղությամբ անմիջապես պատերազմ կիրակիի»<sup>50</sup>: 1945 թ. սեպտեմբերին թուրք գեներալ Ա. Օրպեյը բրիտանական կողմի հետ ունեցած գրույցում տեղեկացրել է, թե հունիսին ԽՍՀՄ-ը պատրաստվում էր արշավել Կարսի ու Արդահանի վիլայեթներ և դաշնակից պետություններին կանգնեցնել կատարված փաստի առջև: Դա վկայում է, որ Անկարան լրջորեն վախենում էր խորհրդային գործողություններից և գիտակցում, որ հայտնվել է դժվարին կացության մեջ, որից դուրս գալու միակ ելքը հզոր դաշնակիցներ ունենալու է, որոնք կարող են դիմակայել Սոսկվային: Այդպիսի դաշնակիցներ են դառնում Սեծ Բրիտանիան և Միացյալ Նահանգները:

Սկզբնական շրջանում դաշնակից պետությունները խորհրդա – թուրքական հարաբերություններում խնդրո առարկա կտրվածքով փորձում էին չեզզորություն պահպանել: Լոնդոնին և Վաշինգտոնին հիմնականում հետաքրքրում էր

<sup>48</sup> «ՀԱԱ արևելագիտության ինստուտի արխիվ, Օնզօր տүրեկոյ պրեսս, փերալի–սիօն, Օբ отношениях между Турцией и СССР, 1946, с. 3.

<sup>49</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, գ. 1, գ. 199 (Թուրքիայի ՍՍՀՄ դեսպանատան ռեֆերենտի տեղեկանքները «Թուրքահայաստանի դիվանագիտական ակտերի պատմության և արևելյան վիլայեթների մասին թուրքական մամուլի և պաշտոնական շրջանակների վերաբերմունքի մասին»), թ. 20:

<sup>50</sup> «ՀԱԱ արևելագիտության ինստուտի արխիվ, Օնզօր տүրեկոյ պրեսս, փերալի–սիօն, Օբ отношениях между Турцией и СССР, 1946, с. 3.

սեղովյան նեղուցների հարցը: Սան-Ֆրանցիսկոյի ԱՄԿ-ի հիմնադիր ժողովի քուրքական պատվիրակության անդամ Ն. Երինը, ամփոփելով այդ երկրների ԽՍՀՄ-ի հողային պահանջների վերաբերյալ տեսակետը, իր կառավարությանը տեղեկացրել է, որ ԱՄՆ ու Մեծ Բրիտանիան համակարծիք են եղել այս հարցի շուրջ և Թուրքիային առաջարկել են համաձայնության գալ ԽՍՀՄ-ի հետ՝ վերադարձնելով այդ տարածըները<sup>51</sup>. ]

Պոտսդամի խորհրդաժողովի նախօրեին այս հարցում Մեծ Բրիտանիայից օգնություն խնդրելու նպատակով Լոնդոն մեկնած Թուրքիայի արտգործնախարար Յ. Սաքան հայտնվել էր բավականին դժվարին կացության մեջ: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Իդենը նրան հասկացրել էր, թե ցանկանում է նեղուցների հարցը զատել «քուրք – սովետական դաշնագրի վերականգնման խնդրէն, այսինքն Կարսի և Արդահանի Ռուսիոյ քողութելու հարցէն»<sup>52</sup>: 1975 թ. քուրքական «Հյուրիթեք» թերթը, անդրադառնալով «Պոտսդամի խորհրդաժողովի նախօրեին Թուրքիայի շուրջ ստեղծված իրավիճակին, գրել է. «... Երբ Ռուսաստանը ներկայացրեց պահանջները, այն ժամանակ, նրա հարաբերությունները ոչ Ամերիկայի, ոչ էլ Անգլիայի հետ լարված չէին, ավելին, այդ պահանջները քննարկվեցին Պոտսդամում»<sup>53</sup>: Պարբերականն այն կարծիքին է հանգել, որ Թուրքիայի կառավարությունը գիտակցում էր, որ ԽՍՀՄ-ի հետ վիճաբանությունն անհմաստ է, այսինքն՝ 1945 թ. հողերի գիշումն անխուսափելի էր: Ըստ քուրքական կողմի՝ իրականում երկիրը հայտնվել էր բավականին դժվար իրավիճակում, և եթե Մեծ տերությունները չփոխեին իրենց վերաբերնունքը ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ Թուրքիայի նկատմամբ, ապա իրենք կզրկվեին արևելյան

<sup>51</sup> Նոյն տեղում:

<sup>52</sup> Նավասարդյան Վ., Նեղուցները (Բոսֆորը և Դարդանելը): Թուրքական ջրուղիները և հայ դատը. Կահիրե, 1947, էջ 322:

<sup>53</sup> Hürriyet (İstanbul), 23. IV. 1975.

նահանգներից<sup>54</sup>: Նկատենք, որ դաշնակից տերությունները նույնպես հայտնվել էին դժվարին իրավիճակում, քանի որ մի կողմից չէին ցանկանում Թուրքիայի պատճառով բախվել ԽՍՀՄ-ի հետ, մյուս կողմից էլ՝ զիջել այս տարածքները:

Հայկական հողերի վերադարձման հարցը Մեծ տերությունների դեկավարները ստիպված էին քննարկել 1945 թ. կայացած պաշտոնական և ոչ պաշտոնական բոլոր հանդիպումներում: Պոտսդամից հետո հաջորդ քննարկումը տեղի է ունեցել 1945 թ. սեպտեմբերին Լոնդոնում կայացած Մեծ տերությունների արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ: Ըստ ամերիկացի հայտնի լրագրող Կ. Բրաունի՝ Լոնդոնի խորհրդաժողովում խորհրդային Միության արտգործնախարար Վ. Սոլյոտովն արձարծել է ինչպես նեղուցների, այնպես էլ Կարսի ու Արդահանի հարցը և հասկացրել, թե «նեղուցներու հակակշիռը միջազգային պետք չէ ըլլայ, և միայն պետք է հանձնվի Ս. Միության և Թուրքիոյ, ինչպես և Կարսի ու Արդահանը պետք է կցուին Ս. Միության»<sup>55</sup>: ԱՄՍ-ի պետքարտուղար Զ. Բյորնսը Բրաունին խստովանել է, որ Լոնդոնից մեկնել է այն տպավորությամբ, «քե Մոսկվայի կառավարությունն ավելի շուտ պատիկ զիջումներ պիտի ընե Պալքաններու մեջ, բայց երբեք տեղի պիտի չտայ նեղուցներու և Կարսի -Արդահանի խորի մեջ»<sup>56</sup>: Միաժամանակ պաշտոնական Անկարան այս հարցի վերաբերյալ Մեծ տերություններին հայտնել էր իր տեսակետը, թե «տրամադիր չէ Կարսի և Արտահանի հողամասերը Սով. Միությանը բողելու»<sup>57</sup>: Ավելին, տեղեկացվում էր, որ բանակը զորացրված չէ և մեկ միլիոն մարդուվ «միշտ պատերազմական վիճակի մեջ է»<sup>58</sup>: Դայտնի է, որ այդ օրերին Անկարան իր սահմանն ամրացնելու միջոցներ էր ծեռնարկել և պատերազմի նախապատրաստվելու որոշակի

<sup>54</sup> Hürriyet, 23. IV. 1975.

<sup>55</sup> Զարթօնք (Բեյրութ), 5. XII. 1967:

<sup>56</sup> Զարթօնք, 5. XII. 1967:

<sup>57</sup> Ժողովուրդ (Փարիզ), 19. IX. 1945:

<sup>58</sup> Ժողովուրդ, 18. IX. 1945:

աշխատանքներ տարել, ինչը, փաստորեն, կարելի է հաճարել որպես ռազմական պատրաստությունների սկիզբ:

Թուրքիայի նախագահ Ի. Ինօնյուն խորհրդարանի նստաշրջանի բացման առթիվ նոյեմբերի 1-ին ունեցած ելույթում, անդրադառնալով պատերազմի տարիներին Թուրքիայի պահկածքին, հաստատել էր, որ, իրոք, Գերմանիայի հետ դաշնագիր են կնքել: Կովկասի սահմանագլխին գորամիավորումների կենտրոնացմանը էլ իրը թե ցանկացել են կանգնեցնել ֆաշիստական Գերմանիայի մուտքը Կովկաս: Վերջում էլ շեշտել էր. «...բացեկիրաց կհայտարարենք, որ որևէ մեկուն պարտք չունիք վճարելիք, մեր իրավունքներուն և հողերուն վրայ կապրենք պատվավոր նարդու պես և կը մեռնենք պատվավոր նարդու պես»<sup>59</sup>:

Թուրքական մանուկը միահանուր թիկունք էր կանգնել կառավարության որդեգրած տարածքային ամբողջականության պահպանման քաղաքականությանը: Դ. Զ. Յալչնը «Թանին»-ում, Ե. Նադին «Զումիյուրիեթ»-ում բացեկիրաց արտահայտում էին հակախորհրդայային և հակահայկական գաղափարներ: Յալչնը «Ֆաշիզմը, որ կարմիր գույն ունի» հոդվածում գրել է. «Ֆաշիզմը քայքայված չէ, այն միայն փոխել է իր գույնն ու միջավայրը: Չորսում՝ սև, Բերլինում էլ գորշ էր: Խսկ այսօր Մոսկվայի մեջ ունի կարմիր գույն»: Յոդվածում ԽՍՀՄ-ի դեմ իր հարձակումները նա պատճռաբանել է հետևյալ կերպ. «Մոսկվայի ծայնը այսօր ուղղված է ուղիղ մեզ և ասում է. «Եթե ուզում ես բարեկամ լինել, ապա պետք է ինձ հոգիդ տաս», այսինքն՝ Կարսը, Արդահանը, Արդվինը, Ենոյուցները, որոնք մեր պատիվը, անկախությունը և հոգին են»<sup>60</sup>: Յատկանշական է, որ այս թեմայի շուրջ թերթերում հրապարակված բոլոր հոդվածներն ունեին նույն բովանդակությունը և, կարծես թե, «չափված ու ծևած էին նույն ծևով»: Ավելի ուշ թուրքական մամուլում հայկական հողային

<sup>59</sup> Ժողովուրդ, 4. XI. 1945:

<sup>60</sup> *Vertanes Ch.*, The Armenian question today, New York, 1946, p. 21.

պահանջները ողակվում են իբրև «մի նոր Մյունխսեն»<sup>61</sup> (խոսքը վերաբերում է 1938 թ. սեպտեմբերի 30-ին Սյունիսենում Սեծ տերությունների կողմից ստորագրված համաձայնագրին, ըստ որի Սուլեբական մարզը Չեխոսլովակիայից անօրինականորեն խլվեց և հանձնվեց Գերմանիային):

Կարելի է վստահ ասել, որ բուրքական մամուլում տեղ գտած հակախորհրդային հոդվածները ծառայել են իրենց նպատակին: Այսպես, 1945 թ. դեկտեմբերի 4-ին Ստամբուլում անցկացված հանրահավաքն ուղեկցվել էր անկարգություններով, ինչնել են հակախորհրդային կոչեր, ավտորուսների և տրամվայների վրա արվել են հակախորհրդային գրություններ, գազագած ամբոխը հարձակվել և քարուքանո՞ւ էր արել խորհրդային գրականություն վաճառող երկու գրախանութ, իսկ խորհրդային հեղինակների գրքերն այրել են: Երկրի քաղաքական որոշ շրջանակներ տեղի ունեցածն որակել են որպես «ժողովրդավարության» արտահայտում<sup>62</sup>: Դեկտեմբերի 8-ին Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովը իր պետության անունից Թուրքիայի արտգործնախարար Յ. Սաքային է հանձնել բողոք – հայտարարագիր, որում բացահայտ ասվում էր, թե դեկտեմբերի 4-ի հակախորհրդային գործողությունների անմիջական պատասխանատուն Անկարայի կառավարությունն է<sup>63</sup>:

Այլ կերպ ասած՝ «նյարդերի պատերազմն» արդեն հասել էր գագաթնակետին:<sup>64</sup> 1945 թ. դեկտեմբերի 5-ին ամերիկացի լրագրող Կ. Բրաունը, անդրադառանալով՝ ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող խնդիրներին, տեղեկացրել էր, որ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ. Բյորնսը «մտահոգած է նեղուցներու եւ Կարսի ու Արդահանի խնդիրներով, որովհետեւ այդ վերջին խնդիրներու լուծումը կրնայ պողորկում յառաջ բերել, մինչ միւս խնդիրները կրնան իրաւախոհու-

<sup>61</sup> Ժողովուրդ, 4. XI. 1945:

<sup>62</sup> Ժողովուրդ, 6. XII. 1945:

<sup>63</sup> Ժողովուրդ, 15. XII. 1945:

թեամբ մը կարգադրուիլ»<sup>64</sup>: Բրաունը միաժամանակ իր հոդվածներում մանրամասներ է հաղորդել Բալկաններում, Կովկասում և Հայաստանում տեղակայված խորհրդային զինուժի թվաքանակի մասին՝ հայտնելով. թե Մոսկվան ՍԱԿ-ին «վերաբերող հարցը չի նկատեր Թուրքիոյ հետ ունեցած իր վեճը և եթե որոշէ զինու գօրութեամբ առնել իր ուզածը, թուրքերը պիտի կռուին, թեու շատ լաւ գիտեն թէ գերազանց ուժի հետ զործ պիտի ունենան»<sup>65</sup>: Ըստ լրագրողի՝ Վաշինգտոնը և Լոնդոնն աշխատելու են համոզել Մոսկվային, թե նրա համար ծեռնոտու կլինի, եթե համաձայնվի Թուրքիայի հետ ունեցած վեճը լուծել ՍԱԿ-ի միջոցով<sup>66</sup>:

Խորհրդային Միուրյունը, սակայն, ի սկզբանե, նախընտրում էր Թուրքիայի հետ իր հարցերը լուծել առանց որևէ երկրի միջամտության ու միջնորդության, անձամբ, այդ պատճառով էլ շարունակում էր վերջինիս նկատմամբ որդեգրած քաղաքականությունը: Արդեն նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ-ի կառավարությունը հայտարարել էր, թե ծրագրել է ներգաղթ կազմակերպել դեպի Խորհրդային Հայաստան:

Խորհրդա – թուրքական հարաբերություններն էլ ավելի սրբեցին, երբ ԽՍՀՄ-ը Հայաստանի անունից բացի Թուրքիային հողային պահանջներ ներկայացրեց նաև Վրաստանի անունից: Դեկտեմբերի 14-ին՝ Մոսկվայի վեհաժողովի նախօրեին, Թիֆլիսի «Կոմունիստ» թերթում հրապարակվել է վրացի ակադեմիկոսներ Ս. Զանաշխայի և Ն. Բերձենիշվիլու՝ «Թուրքիայի նկատմամբ մեր ունեցած օրինական պահանջների մասին» վերնագրով նամակը<sup>67</sup>: Այն եզրափակվում էր հետևյալ տողերով. «Վրացի ժողովուրդը հետ պետք է ստանա իր հողերը, որոնցից երբեք չի հրաժարակվել և երբեք էլ չի հրաժարվի: Մենք նկատի ունենք Արդահանը, Արդվինը, Օլրին, Տորտաման, Սաբրը, Բայբուրը, Գյումուշխանեն և Արևելյան Լազիս-

<sup>64</sup> Զարթօնք, 5. XII. 1945:

<sup>65</sup> Զարթօնք, 5. XII. 1945:

<sup>66</sup> Զարթօնք, 5. XII. 1945:

<sup>67</sup> Պրավդա (Մոսկվա), 20. XII. 1945.

տանը»<sup>68</sup>. Անշուշտ, հասկանալի է, որ վրացիների այս պահանջները Ստալինի գիտությամբ է ներկայացվել, քանի որ առանց նրա նախօրոք թույլատրության ոչ ոք չէր համարձակվի նման բովանդակությամբ հոդված տպագրել: Դա հաստատում է նաև այն փաստը, որ Մոսկվայի վեհաժողովի բացման օրը՝ դեկտեմբերի 20-ին, «Պրավդա», «Իզվեստիա» և «Կրասնայա Զվեզդա» թերթերը վրացերենից ռուսերեն թարգմանելով՝ արտատպել են այդ նամակը: Նոյն օրը Մոսկվայում հոդային պահանջների հարցը ոչ պաշտոնական քննարկել են ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարները<sup>69</sup>:

Թուրքիայի համար վրացիների առաջադրած հոդային պահանջները մեծ անակնկալ էին: Դեռևս ուշքի չեկած հայկական պահանջներից՝ Անկարան ստիպված էր հանակերպել այն նտքի հետ, որ հոդային խնդիրներ ունի նաև վրացիների հետ: Այս անգամ ևս թուրքերը պարզաբանումներ են պահանջել դաշնակից երկրներից՝ Մեծ Բրիտանիային խնդրելով որևէ կերպ ճնշում գործադրել ԽՍՀՄ-ի վրա: Լոնդոնը Թուրքիային առաջարկել է գտնել մի պատմաբան, որը կապացուցի, որ խնդրո առարկա տարածքներն իրենց պատմական հոլերն են: Անկարան հետևել է այս խորհրդին և պատմական տեսանկյունից հերքել վրացի ակադեմիկոսների տեսակետները<sup>70</sup>:

Խորհրդա – թուրքական հարաբերություններում լարվածությունը մնում է նաև 1946 թ.: Հունվարի 3-ին Թուրքիայի արտգործնախարարության գլխավոր քարտուղար Ֆ. Զ. Էրքինը Անկարայում ԱՄՆ-ի դեսպան է. Վիլսոնի հետ կայացած հանդիպման ժամանակ հայտարարել է, որ 1945 թ. մարտ ամսից ԽՍՀՄ-ը Թուրքիայի վրա ճնշում է գործադրում: Նա չի թաքցրել, որ սպառնալիքի վտանգը լցրել է Անկարայի «համբերության բաժակը»<sup>71</sup>:

<sup>68</sup> Правда, 20. XII. 1945.

<sup>69</sup> Ժողովուրդ, 22. XII. 1945:

<sup>70</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 302.

<sup>71</sup> Նոյն տեղում, էջ 302-303:

1946 թ. սկզբին Խորհրդային Սիությունը շարունակում էր իր հողային պահանջների քարոզարշավը: Փետրվարի 1-ին ԽՄՀՄ-ի Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու, ԴԿ(թ)Կ Կենտկոմի քարտուղար Գրիգոր Շարությունյանի՝ Ընտրողների հետ հանդիպման ժամանակ արած հայտարարությունը հիմնականում նվիրված էր «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» խնդրին: Յայկոմկուսի դեկավարն ասել է, որ ժամանակն է իրական տիրոջը Վերադարձնելու Թուրքիայի ծեռքին գտնվող հայկական հողերը՝ վստահեցնելով, որ այդ հարցում հաստատակամ են լինելու, քանի որ հարցը բարձրացված է ամբողջ հայ ժողովրդի կողմից, ավելին, դրանք պաշտպանում է Խորհրդային Յայաստանի կառավարությունը: Ըստ Շարությունյանի՝ Թուրքիայի կողմից հայկական հողերի վերադարձնելն իսկական տիրոջը՝ Խորհրդային Յայաստանին, արդարացի է: Միաժամանակ Յայկոմկուսի դեկավարն անդրադարձել է Սփյուռքում կազմակերպված ներգաղթին և տեղեկացրել, որ Յայաստանի ներկա տարածքը կարող է ընդունել միայն 350–450 հազար մարդու, մնացած 500–600 հազարի համար կրկին բարձրանում է հողերի վերադարձման հարցը<sup>72</sup>: Այսինքն՝ Գ. Շարությունյանը պաշտոնապես հայտարարում էր, թե Խորհրդային Յայաստանը չի կարող ընդունել հայրենիք վերադառնալ բոլոր ցանկացողներին՝ այս կերպ մի կողմից հերքելով Թուրքիայի և Արևմուտքի՝ «խորհրդային ծավալապաշտության» վերաբերյալ տարածվող պնդումները, մյուս կողմից էլ ճնշում գործադրելով հայկական տարածքների վերադարձնան խնդրում:

Յարկ է նկատել, որ Խորհրդային Սիության հողային պահանջները Թուրքիայից հետզիետե ավելի լայն տեղ են գրավում խորհրդային պաշտոնական մամուլում: «Պրավդա»-ն և «Իզվեստիա»-ն հայկական ու վրացական պահանջների վերաբերյալ, կարծես թե, կազմակերպել էին դասախոսությունների շարք: 1946 թ. փետրվարի 20-ին Սոսկվայում՝ ԽՄՀՄ ժողովում խորհրդին կից բարձրագույն դպրոցի գծով կոմի-

<sup>72</sup> Սովետական Հայաստան (Երևան), 3. II.1946:

տեի դասախոսական դահլիճում, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ա. Զիվելեգովը հանդես է եկել «Հայաստան և Թուրքիա» թեմայով դասախոսությամբ: Գիտնականն անդրադարձել է մասնավորապես Հայաստանից բռնագրաված տարածքների պատմությանը և շեշտել, որ «այդ պահանջների բավարարման արդարացիությունը ոչ մի կասկած չի հարուցում»<sup>73</sup>: Մի քանի օր անց էլ «ՊրաՎդա»—ում և «Իզվեստիա»—ում տպագրվել է Վրաստանի Կ(ը)Կ Կենտկոմի քարտուղար Կ. Թերզվիանի «Խորհրդային Վրաստանի 25-ամյակը» խորագրով հոդվածը: Դրանում հեղինակը նախ մատնանշում էր Խորհրդային Վրաստանի տնտեսական և մշակութային նվաճումները, ապա, գովաբանելով խորհրդային կարգերն ու նրան վերագրելով Երկրի առաջընթացը, ավելացնում, թե «անիրականանալի է մնացել միայն Վրաց ժողովրդի դարավոր երազանքը՝ Վրաստանի տարածքային անբողջականության վերականգնումը: Նրա սահմաններից դեռ դուրս են մնում Արդահան, Արդվին, Օլրի, Տարտումա, Բայրութ, Խապիրա, Գյումուշխանն, Լազիստան վրացական տարածքները»<sup>74</sup>: Այլ կերպ ասած՝ Վրացական կողմը կրկին հիշեցնում էր իր հողային պահանջների մասին:

Խորհրդային մաճուլում իրապարակված վերոհիշյալ հողմածների նպատակն էր հասարակությանը ներկայացնել, որ հողային այս պահանջներն արդարացի են: Սակայն այս հարցում առաջ է գալիս մեկ այլ լուրջ խնդիր. հասկանալի է դառնում, որ Երևանն ու Թբիլիսին իրենց պահանջների հարցում չեն համագործակցել և յուրաքանչյուրն իր անունից պահանջել է նոյն տարածքները: Տեղին է նշել, որ Մեծ տերությունները անմիջապես դա օգտագործել են Անկարայի շահերը պաշտպանելու համար: Լոնդոնը հայտարարում է, թե Մոսկվան «նոյնաստիճանի կուսակցական թիկունք կու տայ վրացական, ինչպես նաև հայկական պահանջնեներուն: Ոչ մեկ մեկնարանութիւն կայ որ Երկունք ալ Արտահանը կը

<sup>73</sup> Известия, 22. II.1946.

<sup>74</sup> Правда, 25. II.1946.

պահանջեն: Վրացական քարտուղարը իր հայկական պաշտոնակիցին հակառակ ուղղակիօրէն Թուրքիան չի նեղադրեր վրացական հողերը առնելու մէջ»<sup>75</sup>:

Ի պատասխան Մոսկվայի պահանջներին, փետրվարի սկզբներին Ստամբուլում լուս է տեսնում Ֆ. Գյուլբունջուի «Զեօք մի տուր այս հայրենիքին» խորագրով բանաստեղծությունների ժողովածուն: Գրքի առաջարանում թերվում են ինչպես անգլիական մանուշի և ռադիոյի, այնպես էլ թուրք քաղաքական գործիչների՝ Կարսի, Արդահանի ու այլ շրջանների մասին արած հայտարարությունները: Բանաստեղծությունների բնույթն էլ մեկն էր. «Թշնամին կրկին բարձացրել է իր դրոշը և հայացքն ուղղել է մեր հայրենիքի ուղղությամբ: ... Կարսից մինչև Մարիցա հողերը մերն են: ... Ինչպես այսօր, այնպես էլ վաղը ամբողջ Թուրքիան պատրաստ է նետվել կրակի մեջ՝ հանուն իր հողի: Մենք պատրաստ չենք դառնալու աղվեսի գոհերը և կլուրենք այն սոված գայլերի կոկորդները, որոնք կիարձակվեն մեզ վրա»<sup>76</sup>: Այս ոգով գրված բանաստեղծությունների ողջ ժողովածուի միակ նպատակն էր ԽՍՀՄ-ի նկատմամբ թշնամանք սերմանել թուրք ժողովոյի մոտ: Նույն նպատակով գրքում զետեղված են մի շարք նկարներ: Դրանցից մեկում պատկերված է կրեմլ, որի վրայով՝ կրակի միջով, անցնում են թուրքական ծիերը<sup>77</sup>:

1946 թ. գարունը դարձավ աշխարհաքաղաքական մեծ շրջադարձի սկիզբ: ճարտի 5-ին ԱՍՍ-ի Ֆուլտոն քաղաքում Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ու. Չերչիլի նշանավոր

<sup>75</sup> Մարդու Ձ. Մեծ Բրիտանիա եւ Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի անունով ատարուած հոլային պահանջը. – Հայկացյան հայագիտական հանդես, Պէյրութ, 1998, էջ 300:

<sup>76</sup> «ՀԱՅԱ արևելագիտության ինստուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946, Краткое резюме книги Фарука Гюргюнджа «Не тронь эту родину», с. 1.

<sup>77</sup> «ՀԱՅԱ արևելագիտության ինստուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946, Краткое резюме книги Фарука Гюргюнджа «Не тронь эту родину», с. 2.

Ելույթով սկիզբ դրվեց «սառը պատերազմին»: Դա գաղափարական մի պատերազմ էր, որը Արևմուտքը վարում էր Խորհրդային Միության դեմ: Այդ պայքարում Թուրքիան դարձավ Անգլիայի և ԱՍՍ-ի հավատարիմ դաշնակիցը, ու նրանք հայկական հողային հարցին սկսեցին ավելի սառը մոտեցում ցուցաբերել: Այլ կերպ ասած՝ Ֆուլտոնում ունեցած Ու. Չերչիլի ելույթը փրկեց Թուրքիային ճամատումից: Աստիճանաբար մեծանում էր վերջինիս դերը հակախորհրդային պայքարում. նա դարձավ Վաշինգտոնի և Լոնդոնի հավատարիմ դաշնակիցը:

Բացի այդ, ինչպես վերը նշվեց, նկատելի է դառնում, որ տարածաշրջանում Լոնդոնը գնալով սկսում է իր դիրքերը գիշել Վաշինգտոնին: Վերջինս կիրառում էր բոլոր միջոցները Թուրքիայի վրա իր ազդեցությունը մեծացնելու համար: ԱՍՍ- Թուրքիա հարաբերությունների մերձեցման համար հարմար առիթ դարձավ 1944 թ. ԱՍՍ-ում մահացած Թուրքիայի դեսպան Ս. Էրթիկյունի ածյունը հայրենիք տեղափոխելու թուրքական կառավարության խնդրանքը<sup>78</sup>: Նախագահ Տրումենը Անկարայի նկատմամբ իր բարի կամքը ցուցադրելու նպատակով դրա համար տրամադրել էր ամերիկյան «Միսսուրի» նավը: Վերջինս Ստամբուլ է հասել 1946 թ. ապրիլի 5-ին: Դրանով Թուրքիա են ժամանել նաև ԱՍՍ-ի նախագահի անձնական ներկայացուցիչ Վ. Ունենելը և ամերիկացի մի խումբ լրագրողներ: Թուրքական մամուլն այս այցին լայն տեղ է հատկացրել՝ ակնարկելով, թե ամերիկացիներն այս կերպ ցանկանում են վախեցնել Թուրքիայի հնարավոր թշնամիներին<sup>79</sup>: Դասկանալի է, թե խոսքն ուն մասին էր, քանի որ այդ ժամանակ Թուրքիայի միակ թշնամին համարվում էր ԽՍՀՄ-ը: Այդ օրերին «Թասվիր» թերթը գրել է. «Սեր ընկերները բավարարված են այդ ընկերությամբ: Թուրքիան, ունենալով

<sup>78</sup> Расизаде А., План Маршалла в Турции. - Народы Азии и Африки, М., 1984, № 3, с. 103.

<sup>79</sup> «ՀԱՍՍ արևելագիտության ինստուտի արխիվ. Обзор турецкой прессы, февраль-июнь, 1946, Отклики прессы на пребывание в Стамбуле линкора «Миссисури», с. 8.

նման իզոր ընկեր, ինչպիսին Ամերիկան է, կարող է մեծ անվտանգությանք և հանգստությանք շարունակել Մերձավոր Արևելքում խաղաղության գործը»<sup>80</sup>: Այս առթիվ թուրքական պարբերականները մեջքերումներ են արել նախագահ Ի. Ինոնյուի՝ ամերիկացի լրագրողներին արած հայտարարությունից, թե «որքան մոտ լինեն ամերիկյան նավերը, այնքան լավ» Թուրքիայի համար, և նշել՝ «քուրք – ամերիկյան նավերի՝ իրար ողջունող համազարկերը մեր քշնամիների մոտ դժգոհություն են առաջացնում»: «Թշնամին դժգոհ է, որ օրեցօր ամրացող թուրք – ամերիկյան ընկերությունը ստիպում է նրանց ավելի լավ մտածել, նախքան Թուրքիայի վրա հարձակվելը»<sup>81</sup>:

Թուրքական մամուլն այդ օրերին նաև անդրադարձել է «բանակի օրվա» առթիվ Տրումենի ելույթին՝ վստահեցնելով, թե ԱՍՍ-ն կպաշտպանի իրենց ցանկացած վտանգից<sup>82</sup>: Այդ մասին են վկայում և ԱՍՍ-ի պետքարտուղար Զ. Բյորնսի՝ ի նպաստ Թուրքիայի արած հայտարարությունները: Դիցուք այս՝ «Թուրքիան պիտի պաշտպանենք, ի պահանջել հարկին՝ գենքով»<sup>83</sup>: Անկարայում ամերիկյան ղեսպան Վիլսոնը ապրիլի 12-ին Վաշինգտոնին տեղեկացրել է, թե «Թուրքերի համակրանքը ամերիկացիների նկատմամբ օրեցօր մեծանում է: ... «Սիստուրի»-ի այցով, կարծես թե, նոր փուլ է սկսվել ամերիկա – թուրքական հարաբերություններում»<sup>84</sup>:

Թուրք – ամերիկյան մերձեցումից գոտեպնդված պաշտոնական Անկարան սկսում է ավելի վստահ գործել: Տրապիզոնում նախագահ Ի. Ինոնյուն հայտարարում է, «քե երկրի արևելյան նահանգներում իր շրջագայության ընթացքում փորձել է ազգաբնակչությանը հասկացնել, որ տարածքային

<sup>80</sup> Նույն տեղում:

<sup>81</sup> <<ԱԱԱ արևելագիտության ինստուտի արխիվ. Обзор турецкой прессы, февраль–июнь, 1946, Отклики прессы на пребывание в Стамбуле линкора «Миссouri», с. 10.

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>83</sup> Արարատ (Բեյրութ), 9. IX. 1974:

<sup>84</sup> Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 315-316.

ամբողջականությունը կախված է ժողովրդի կամքից<sup>85</sup>: Նա բնակչությանը կոչ է արել համախմբվել կառավարության շուրջ:

Եվ չնայած 1946 թ. ընթացքում Հայկական հարցը շարունակում էր մնալ Մեծ տերությունների քննարկման առարկա, սակայն արդեն պարզ էր, որ այն լուծվելու է ի նպաստ Թուրքիայի: ԱՄՍ-ի պետքարտուղարի տեղակալ Դ. Աշխոնը օգոստոսի 15-ին խոսելով «Թուրքիայի և Հունաստանի նկատմամբ ԽՍՀՄ-ի քայլերի լրջության մասին» հայտարարել է, որ իր կառավարությունը վճռել է «ամեն գնով ընդունակ դրանց»<sup>86</sup>: Արդյունքում, 1947 թ. մարտի 12-ին ԱՄՍ-ի նախագահը հրապարակել է նշանագոր «Տրումենի դրկտրինան», որով երաշխավորվում էր Հունաստանի և Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Այդ օրերին Տրումենը նաև հայտարարել է, որ Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանմամբ ապահովվում է կարգուկանոնը Միջին Արևելքում<sup>87</sup>:

ԱՄՍ կոնգրեսը այդ երկրի ծրագրերն իրականացնելու համար վավերացրել է արտասահմանյան երկրներին որպես տնտեսական և ռազմական օգնություն հատկացվելիք 400 մլն դոլարի բյուջեն, որից 100 մլն տրամադրվելու էր Թուրքիային: Դա իմք է հանդիսացել բուրք – ամերիկյան հետագա սերտ բարեկամության համար: Այդպես, 1947 թ. մայիսի 2-ին Ստամբուլ է ժամանել ԱՄՍ-ի Միջերկրական նավատորմը, հունիսին Անկարա է եկել ամերիկյան գինվորականության պատվիրա-

<sup>85</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, ց. 1, գ. 199 (Թուրքիայի ՍՍՀՄ դեսպանատան ռեփերենտի տեղեկանքները «Թուրքահայաստանի դիվանագիտական ակուերի պատմության և արևելյան վիլայեթների մասին բուրքական մանուկի և պաշտոնական շրջանակների վերաբերմունքի մասին»), թ. 28:

<sup>86</sup> Acheson D., Present at the creation, my years in the state department, New York, 1949, p. 196.

<sup>87</sup> Արարատ, 9. IX. 1974:

կուրյունը, իսկ հուլիսի 12-ին երկու երկրների միջև ստորագրվել է ռազմական համաձայնագիր՝<sup>88</sup>:

Ի դեպ, այս ամենին ակնդետ հետևող խորհրդային Սիությունը սեպտեմբերի 15-ին ՍԱԿ-ի ամբիոնից հայտարարել է, թե ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Հունաստանին և Թուրքիային տրամադրվող տնտեսական ու ռազմական աջակցությունը ԽՍՀՄ-ի դեմ օգտագործվելու է որպես քաղաքական գենը՝<sup>89</sup>:

«Տրումենի դոկտրինայի» հրապարակումից հետո քուրքերն իրենց զգում էին էլ ավելի վստահ: Թուրքիայի նախագահ Է. Ինոնյուն Ոլգեսում ունեցած ելույթում հայտարարել է, որ, «ի տարբերություն անցած տարվանից, Թուրքիայի իրավիճակը ավելի անուր է»<sup>90</sup>: Թուրքական մանուկն էլ ազդարություն էր, որ իրենք են հաղթել «նյարդերի պատերազմը»<sup>91</sup>:

1947 թ. լուս աշխարհ եկավ ԱՄՆ-ի տնտեսական օգնությամբ Եվրոպան վերականգնելու և զարգացնելու վերաբերյալ պետական քարտուղար Զ. Սարչալի ծրագիրը (այստեղից էլ «Սարչալի պլան» անվանումը): 1948 թ. այդ ծրագիրը տառածվել է նաև Թուրքիայի վրա:

Այսպիսով, «Տրումենի դոկտրինայի» և «Սարչալի պլան»ի իրազործան արդյունքում Թուրքիան ԱՄՆ-ից ստացավ ռազմական ու տնտեսական մեծ օգնություն: Փոխարենը ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան Թուրքիայի տարածքում հնարավորություն ստացան կառուցել իրենց ռազմական հանգրվանները: Դրանով իսկ Մեծ տերությունները պարտավորվեցին պաշտպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը:

<sup>88</sup> Hostler Ch., Turkism and the Soviets, London, 1957, p. 187.

<sup>89</sup> Ժողովուրդ, 20. IX. 1947:

<sup>90</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, գ. 1, գ. 199 (Թուրքիայի ՍՍՀՄ դեսպանատան ռեֆերենտի տեղեկանքները «Թուրքահայաստանի դիվանագիտական ակտերի պատմության և արևելյան Վիլայեթների մասին բուրքական մանուկի և պաշտոնական շրջանակների վերաբերմունքի մասին»), թ. 28:

<sup>91</sup> Նույն տեղում:

1947 թ. նոյեմբերի 12-ին «Ոլուս» թերթում հրապարակված «Ամերիկյան արտաքին քաղաքականությունը» խորագրով հոդվածում թուրք լրագրող Ն. Երինը, վերլուծելով հետպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիայի նկատմամբ ԱՄՆ-ի վարած փոփոխական քաղաքականությունը, հանգել էր այն եզրահանգման, որ Թուրքիայի ճակատագիրը դեռ վտանգված է, քանի որ Տրումենի վարչակազմը, ոչ թե Թուրքիայի, այլ ԱՄՆ-ի շահերն է պաշտպանում և անհրաժեշտության դեպքում իրենց կղավաճանի<sup>92</sup>: Այլ կերպ ասած՝ թուրքերն ամերիկյան պաշտպանությունից, իրենց այնքան էլ վստահ չին զգում, գիտակցելով, որ Երե վազը Վաշինգտոնի շահերը մեկ այլ բան պահանջեն, ապա միջազգային քաղաքական իրավիճակը կրկին կփոխվի և մեծ էր հավանականությունը, որ ոչ ի նպաստ Թուրքիայի:

Այստեղ հարկ է նշել, որ վերջին տասնամյակներին մի շարք թուրք պատմաբաններ փորձում են «նսեմացնել» հետպատերազմյան տարիներին ԱՄՆ-ի դերը Թուրքիայի կյանքում, մասնավորապես, թե ԱՄՆ-ը չի փրկել Թուրքիային ԽՍՀՄ-ի հնարավոր հարձակումներից: Ըստ Նրանց, 1946 – 1947 թթ. Դայկական հարցը, ծիշտ է, շարունակում էր մնալ միջազգային քաղաքական ասպարեզում, սակայն արդեն պարզ էր, որ այն լուծվելու է ի նպաստ Թուրքիայի: Պատմաբան Դ. Ազգօղլուն «Ազգային ազատագրության պատմություն» աշխատության մեջ նույնիսկ հայտնում է, թե ԱՄՆ-ի պետքարտուղար Զ. Բյորնսը 1946 թ. աշնանը, իբր, բացահայտորեն հայտարարել էր, որ ԱՄՆ-ը կարող է միայն տնտեսական օգնություն ցույց տալ Թուրքիային<sup>93</sup>: Պրոֆ. Ա. Շյուբրունը էլ 1966 թ. «Ուլուս» թերթում հրատարակած «Թուրքիայի փրկիչը Ամերիկա՞ն է» հոդվածում գրել է, թե Թուրքիայի վիճակը հետպատերազմյան ժամանակաշրջանում շատ ծանր էր. «Եթե Խորհրդային Միությունը ճնշումը պատերազմի վե-

<sup>92</sup> «ՀԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբզօր турецкoy прессы, 1947, Относительно Американской внешней политики, с. 18.

<sup>93</sup> Avcıoğlu D., Milli Kurtuluş Tarihi, Üçüncü kitabı, İstanbul, 1974, s. 1471.

րածեր, ապա Թուրքիան ստիպված կլիներ միայնակ պատերազմել: Եվ քննարկելով այդ տարիների անցուղարձերը՝ կարող ենք վստահ լինել, որ ոչ դաշնակից Անգլիան, և ոչ էլ իր փրկարարությամբ հպարտացող Միացյալ Նահանգները օգնության չեին հասնի»<sup>94</sup>:

Ինչեւ, Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջը, այն է՝ Կարսի ու Արդահանի վերադարձնան հարցը, 1947 թ. շարունակում էր մնալ Մեծ տերությունների օրակարգում: 1947 թ. հոկտեմբերի 24-ին ՍԱԿ-ում մեկ անգամ էլ է այն անուղղակիորեն արծարձվել: Այսպես, եթե Թուրքիայի ներկայացուցիչ Ա. Սարպերը հայտնել է, թե խորհրդային մամուլում և ռադիոյում տարվող հակաթուրքական քարոզարշավում լայն տեղ է տրվում Վրացական տարածքային պահանջներին՝ չիշշատակելով հայկականը, ԽՍՀՄ-ի ներկայացուցիչ Ա. Վիշինսկին պատասխանել է, թե ինչ վերաբերում է Թուրքիայի տարածքում գտնվող Կարսի և Արդահանի շրջանների Վրացական լինելու մասին խորհրդային Վրաստանի պատճառքանների նամակին, ապա այդ գիտնականների հիմնավորումներն անվիճելի են: Նա խորհուրդ է տվել Սարպերին մեկ անգամ էլ կարդալ իիշյալ նամակը, որում Վրացի ակադեմիկոսները, ապացուցելով, որ այդ հողերը Վրացական են, պահանջում են դրանք վերադարձնել իրենց<sup>95</sup>: Վիշինսկին հետևելով Սարպերին՝ իր ելույթում ևս չի գործածել «հայկական տարածքային պահանջներ» պրտահայտությունը: Նկատենք, որ Ի. Ստալինը կամ էլ Վրացի ակադեմիկոսները, ի տարբերություն խորհրդային դիվանագետի, Կարսը չեն համարել Վրացական:

ՍԱԿ-ում ԽՍՀՄ-ի ներկայացուցիչ Ա. Վիշինսկու այս ելույթը հետազյում մեծ իրարանցում է առաջացրել աշխարհասփյուռ հայության շրջանուն: Խորհրդային մամուլն անաղմուկ փորձել է ուղղել դիվանագետի սխալը. մոսկովյան «Տրուդ» թերթը հոդված է իրատարակել Կարսի ու Արդահանի

<sup>94</sup> Ulus (İstanbul), 15. V. 1966.

<sup>95</sup> Правда, 28. X. 1947.

մասին՝ հիշեցնելով, որ Մոսկվայի Լենինի տուն թանգարանի պատին կախված է առաջնորդի ծննդով գծված Կովկասի քարտեզը, որում կարմիր շրջանակի մեջ են առնված հայկական երկու նահանգները՝ Կարսն ու Արդահանը<sup>96</sup>: Սկիզբուն Ա. Վիշինսկու այս հայտարարությունը հատկապես մեծ աղմուկ է բարձրացրել դաշնակցության պարբերականներում: Վերջիններս գրում էին, թե ԽՍՀՄ-ն արդեն թաղել է Յայկական հարցը: Դա ստիպել է խորհրդային դիվանագետին տալ որոշ պարզաբանումներ. «Ես ըսած եի, թէ վրացի գիտնականներ յայտնած են, թէ Կարսն ու Արտահանը 1500 բուականներէն ի վեր կը պատկանին Վրաստանին: Ես չըսի թէ՝ Կարսն ու Արտահանը կը պատկանին Վրաստանին. չըսի նաեւ, թէ կը պատկանին Յայաստանին: Ես ըսի, որ Խորհրդ. Միութիւնը պիտի առնե Կարսն ու Արտահանը եւ պիտի տայ անոր, որուն կը պատկանի»<sup>97</sup>:

1948 թ. Կարսի և Արդահանի պահանջը դեռ շարունակվում էր մնալ Մեծ տերությունների ուշադրության կենտրոնում: Այսպես, ապրիլի 24-ին Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Դ. Քելլին իր երկու արտգործնախարարությանն ոլղած նամակում անդրադարձել է Խորհրդային Յայաստանի անունից ԽՍՀՄ-ի պահանջած հողերին: Նա գրել է, որ ԽՍՀՄ-ի միակ նպատակն է իր ազդեցությունը տարածել Թուրքիայի վրա: Ըստ այդմ՝ Մոսկվան Անկարային ներկայացրել է պահանջներ, որը վերջինս չէր կարող ընդունել: Դեսպանը նշել է, թէ Կարսի, Արդահանի և Արդվինի պահանջի պատճական հիմքները պաշտոնապես հերքվել են Թուրքիայի վարչապետի կողմից, սակայն հարցը մինչ օրս մնում է օրակարգում: Դա, ըստ Քելլիի, վկայում է, որ Խորհրդային Միությանն անհրաժեշտ է ստանալ Արևելյան Անատոլիայի տարածքները<sup>98</sup>:

<sup>96</sup> Труд (Москва), 29. XI. 1947.

<sup>97</sup> Հազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Կահիրե, 1957, էջ 365-366:

<sup>98</sup> Burdett A., Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948, U. K., 1998, pp. 1053-1059.

Այսպիսով, 1946 թ. գարնանից սկսված «սառը պատերազմ» բացասական անդրադարձ է ունեցել և սկզբվան նեղուցների վերահսկման, և հայկական տարածքների վերադարձման գործում: Նախ, աշխարհում քաղաքական իրադրությունը փոխվել էր: Եթե պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն հաճագործակցում էին ու ֆաշիստական բլոկի երկրների դեմ պայքարում հանդես էին գալիս որպես դաշնակիցներ, ապա պատերազմից հետո պատկերն այլ էր. սկսվել էր «սառը պատերազմ», և նախկին դաշնակիցները հայտնվել էին տարբեր ճամբարներում: Մյուս կողմից էլ, հնարավոր է, որ ԽՍՀՄ-ում սկսված սոցիալ-տնտեսական ճգնաժամն իր դերակատարությունն է ունեցել, ինչը 1947 թ. Մոսկվային ստիպել է սառեցնել «Քուրքական ծրագիրը»:

Մինչդեռ խնդրո առարկա հարցերի շուրջ լռությունը չի նպաստել խորհրդա-քուրքական հարաբերությունների բարելավմանը: Երկու երկրների միջև լարվածությունն էլ ավելի է խորացել, երբ 1951 թ. աշնանը արևմտյան պետությունները որոշեցին Թուրքիային ընդգրկել Հյուսիսատլանտյան դաշինքի (ՍԱՏՕ) մեջ: Թուրքիայի արտգործնախարար Ֆ. Քյոփուրլուն 1951 թ. դեկտեմբերի 19-ին մեջլիսում ունեցած իր ելույրում ԽՍՀՄ-ին մեղադրել է միջազգային լարվածության մեջ և հայտարարել, որ ՍԱՏՕ-ին անդամակցելով իրենք ապահովագրում են երկրի անվտանգությունը<sup>99</sup>:

Ինչ վերաբերում է Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած սկզբվան նեղուցների և հայկական տարածքային խնդիրներին, ապա դրանք օրակարգից դուրս են եկել միայն 1953 թ. մայիսին՝ Ստալինի մահից հետո, երբ խորհրդային Միությունը պաշտոնապես հայտարարել է, որ Թուրքիայից ոչ մի պահանջ չունի:

<sup>99</sup> Olaylarla Türk dış Politikası (1919-1973), Ankara, 1974, s. 426-427.

## ԱՄՓՈՓՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայի պատճառով բավականին ծանր պահեր ապրած է. Ստալինը նպատակադրվել էր հետպատերազմյան տարիներին պատճել անհավատարիմ հարևանին՝ օրակարգ բերելով ինչպես սկզնվյան նեղուցների վերահսկման, այնպես էլ հայկական տարածքների՝ Կարսի ու Արդահանի, վերադարձնան հարցերը:

Պատերազմի տարիներին Անկարայի կողմից 1936 թ. Մոնտրոյի համաձայնագրի խախտնան դեպքերը ստիպել են խորհրդային կողմին բարձրացնել սկզնվյան նեղուցների համատեղ վերահսկման հարցը, ինչը սահմանափակվել է միայն կողմների միջև հայտարարագրերի փոխանակմամբ: Բացի այդ, 1945 թ. ԽՄՀՄ-ը վերականգնել էր 1914 թ. դրույթյամբ ցարական Ռուսաստանի բոլոր սահմաները՝ բացառությամբ Օսմանյան կայսրության հետ ունեցածի, և բնական է, որ առաջ էր եկել նաև Կարսի ու Արդահանի վերադարձնան հարցը: Տարածքներ, որոնք 1878 թվականից Ռուսաստանի կազմում էին և Թուրքիային էին անցել 1921 թ.:

Հայկական հողային պահանջը խորհրդային կողմը մատուցել է բավականին նրբանկատորեն՝ անտեսելով այս հարցում իր հետաքրքրությունը. այն, նախ, ներկայացրել է հայերի, ավելի ուշ՝ նաև վրացիների անունից: Պնդելով, թե ցանկանում է վերականգնել պատճական արդարությունը, Ի. Ստալինն ընտրել էր Թուրքիային պատճելու լավագույն միջոցը, որը ԽՄՀՄ-ին հնարավորություն էր տալիս ընդարձակել իր տարածքները նավով հարուստ հարավային շրջաններում և սահմանակից դառնալ իրաքին ու Սիրիային: Այլ կերպ ասած՝ Մոսկվան Հայկական հարցն օգտագործում էր ի նպաստ իր շահերի:

1946 թ. զարնանից սկսված «սառը պատերազմի»,  
1947 թ. «Տրումենի դոկտրինայի» և «Մարշալի պլանի» իրա-  
գործման պայմաններում ԽՍՀՄ-ը ստիպված էր որոշ ժամա-  
նակով սառեցնել թե սկզբվան նեղուցների, և թե՝ սահմանի  
վերանայման ծրագրերը: Իսկ ավելի ուշ՝ 1953 թ., Ստալինի  
մահից հետո, Մոսկվան պաշտոնապես հրաժարվեց Թուրքիա-  
յին ներկայացրած պահանջներից:

# СОВЕТСКО – ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В 1945-1947 ГОДАХ: ПРОБЛЕМА ЧЕРНОМОРСКИХ ПРОЛИВОВ И АРМЯНСКИЙ ВОПРОС

КРИСТИНЕ МЕЛКОНЯН

## Резюме

В конце Второй мировой войны И. Сталин был полон решимости наказать южного соседа – Турцию, выдвинув на повестку дня проблему контроля над черноморскими проливами и вопрос о возврате Советской Армении Карса и Ардагана в поэвтоеный период.

В годы Второй мировой войны нарушение условий конвенции Монтре (1936 г.) со стороны Анкары вынудило СССР поднять вопрос о совместном контроле над черноморскими проливами, который в дальнейшем завершился лишь обменом нот между сторонами. Помимо этого, в 1945 г. СССР восстановил границы, установленные царской Россией в 1914 г., за исключением российско-турецких границ. Тем самым советское правительство преследовало цель вернуть Карс и Ардаган, входившие в составе России с 1878 г. и отобранные Турцией в 1921 г.

Москва действовала осторожно, и требование возврата этих территорий было предъявлено вначале от имени армян, а позже – от имени грузин. Под видом восстановления исторической несправедливости Сталин избрал для Турции наилучший способ наказания, в силу чего Советский Союз мог расширить сферу своего влияния в Турции и получить возможность граничить с Ираком и Сирией. Иными словами, Москва пыталась использовать Армянский вопрос в своих интересах.

В условиях «холодной войны» весной 1946 г. и в жизнь проведения «доктрины Трумэнна» и «плана Маршалла» в 1947 г. Советский Союз вынужден был временно отложить вопрос черноморских проливов и пересмотра границ. Позднее, после смерти Сталина в 1953 г., Москва официально отказалась от требований в отношении Турции.

# SOVIET – TURKISH RELATIONS IN 1945-1947: PROBLEM OF THE BLACK SEA PASSAGES AND THE ARMENIAN QUESTIONS

CHRISTINE MELKONYAN

## Summary

In the end of the Second World War and especially in the post war period I. Stalin had an intention to punish Turkey as an unfaithful southern neighbour. This included the problem of the control over the Black Sea passages as well as the question of returning the Armenian territories of Kars and Ardahan.

Cases of numerous infringements of conditions of the Montreux convention signed in 1936, by Ankara during the war have forced the USSR to raise a question on the joint control over the Black Sea passages which then had been ended only by the exchange of notes between the sides. Besides, in 1945 the USSR restored all the borders established by Russia in 1914, except Russian-Turkish borders. Naturally the Soviet government intended to return the Armenian territories of Kars and Ardahan that were Russian territories since 1878 and were given to Turkey in 1921.

Moscow worked cautiously, not expressing openly its interests, – requirements of returning these territories had been presented all over again on behalf of Armenians, later on behalf of the Georgia. Confirming, that it wishes to restore historical injustice, Stalin has chosen the best way of punishment of Turkey that allowed the Soviet Union expand the sphere of influence in the petrolierous South of Turkey and would receive and become neighbor to Iraq and Syria. Otherwise, Moscow tried to exploit the Armenian question.

During the «cold war», mainly, in spring 1946, in the atmosphere of implementing the «Truman's doctrine» and «The plan of Marshall» in 1947 forced the Soviet Union to freeze temporarily programs of the Black Sea passages and revision of borders. Later, after the death of Stalin in 1953, Moscow has officially renounced the claims to Turkey.

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## 1. ԱՐԽԻՎՆԵՐ

1. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, ց. 1, գ. 199 (Թուրքիայում ՍՍՀՄ դեսպանատան ռեփերենտի տեղեկանքները «Թուրքահայաստանի դիվանագիտական ակտերի պատմության և արևելյան վիճակների մասին բուրքական մամուլի և պաշտոնական շրջանակների վերաբերունքի մասին»), 29 թ.:
2. «ՀԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль – июнь, 1946, После сообщения об американской гарантии, «Вакит», 3 с.
3. «ՀԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, июль – ноябрь, 1946, Высказывания печати по вопросу проливов, 14 с.
4. «ՀԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль – июнь, 1946, Об отношениях между Турцией и СССР, «Улус», «Ени Асыр», «Тасвир», 6 с.
5. «ՀԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль – июнь, 1946, Краткое резюме книги Фарука Гюргюндюз «Не тронь эту родину», 2 с.
6. «ՀԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль – июнь, Отклики прессы на пребывание в Стамбуле линкора «Миссурি», 7 с.
7. «ՀԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль – июнь, Речь Иемета Иненго в Трабзоне, «Улус», 7 с.
8. «ՀԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, 1947, Относительно Американской внешней политики, 18 с.
9. Արխիվ վնешней политики Российской Федерации, ф. 06, оп. 7, п. 2, д. 31 (Из дневника В. Молотова. Прием посла Турецкой Республики С. Сарпера. 07. 06. 1945 г., 18. 06. 1945 г.), 38 л.

## 2. ԳՐԱԲԵՐ, ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Հագեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Կահիրե, «Հուսաբեր», 1957, 442 էջ:
2. Մսդրյան Զ., Մեծ Բրիտանիա եւ Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Կրաստանի անունով 1945ին կատարուած

- հողային պահանջմանը. – Հայկազյան հայագիտական հանդես, Պետրով, 1998, էջ 293-318:
3. Սավասարդյան Վ., Նեղուցները (Բոսֆորը և Դարդանելը): Թուրքական զրուցիները և հայ դատը, Կահիրե, «Հուսաբեր», 1947, 477 էջ:
  4. Մահակյան Ռ., Սովետա – թուրքական հարաբերությունների պատճության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Երևան, «ՀԱՍՈ գիտությունների ակադեմիա հրատարակչություն», 1964, 129 էջ:
  5. Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, т. III, М., ОГИЗ, 1947, 648 с.
  6. Внешняя политика СССР, т. VI, М., «Политиздат», 1962, 664 с.
  7. Гасанлы Дж., СССР – Турция: от нейтралитета к холодной войне. 1939–1953, М., «Центр Пропаганды», 2008, 680 с.
  8. Расизаде А., План Маршалла в Турции. – Народы Азии и Африки, М., 1984, № 3, с. 94–105.
  9. Родионов А., Записки посла СССР в Турции 1974–1983 гг. – Новая и новейшая история, М., 1999, № 1, с. 116–140.
  10. Российско – турецкие отношения: история, современное состояние и перспективы, М., «Политиздат», 2003, 197 с.
  11. Служба Внешней Разведки Российской Федерации, Архив СВР России, Сборник документов (1935–1945), М., СВР РФ, 2006, 498 с.
  12. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, М., «Политиздат», 1980, 551 с.
  13. Acheson D., Present at the creation, my years in the state department, New York, Norton, 1949, 798 p.
  14. Burdett Anita L. P., Armenia, Political and Ethnic Boundaries, 1875–1948, U. K., 1998, 1034 p.
  15. Hostler Ch., Turkism and the Soviets, London, Allen&Unwin, 1957, 244 p.
  16. Hurewitz J., Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record 1914–1956, v. II, New York, Norton, 1972, 404 p.
  17. Vali Ferenc A., The Turkish Straits and NATO, Stanford, Hoover Institution Press, 1972, 348 p.
  18. Vertanes Ch., The Armenian question today, New York, Armenian National Council of America, 1946, 32 p.

19. Zubok V., Pleshakov C., Inside the Kremlin's Cold War. From Stalin to Khrushchev. Harvard University Press, 1996, 278 p.
20. Akalın C., Soğuk Savaş ABD-Türkiye-İ. Olaylar –Belgeler 1945–1952, İstanbul, Kaynak Yayımları, 2003, 356 s.
21. Arcayürek C., Şeytan Üçgeninde Türkiye, Ankara, Bilgi Yayınevi, 1987, 386 s.
22. Armaoğlu F., Belgelerle Türk-Amerikan Münsebetleri, Ankara, TTK Basımevi, 1991, 284 s.
23. Avcioglu D., Milli Kurtuluş Tarihi, Üçüncü kitabı, İstanbul, Tekin Yayınları, 1974, 1517 s.
24. Deliorman A., Türklerle Karşı Ermeni Komitecileri, İstanbul, Boğaziçi basım ve yayinevi, 1973, 335 s.
25. Erkin F., Türk- Sovyet ilişkileri ve Boğazlar, Ankara, Karton Kapaklı, 1968, 452 s.
26. Kirzioğlu M., Kars Tarihi, İstanbul, İşıl Matbaası, 1953, 622 s.
27. Olaylarla Türk dış Politikası (1919–1973), Üçüncü baskı, Ankara, Yayın Yılı, 1974, 587 s.
28. Ünal T., 1700 den 1958 e Kadar Türk Siyasi Tarih, Ankara, Bilgi Yayınevi, 1958, 291 s.

### 3. ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՆ

1. Ազդակ, Բեյրութ, 1993
2. Արարատ, Բեյրութ, 1974
3. Զարթօնք, Բեյրութ, 1945, 1967
4. Ժողովուրդ, Փարիզ, 1945, 1947
5. Սովետական Հայաստան, Երևան, 1946
6. Известия, М., 1945, 1946
7. Правда, М., 1945, 1946, 1947
8. Труд, М., 1947
9. Hürriyet, İstanbul, 1975
10. Ulus, İstanbul, 1966
11. The Economist, London, 1945

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ .....	3
ԳԼՈՒԽ I	
ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի միջև 1945 թ. մարտ – հունիս ամիսներին կայացած բանակցությունները .....	4
ԳԼՈՒԽ II	
Մեծ տերությունները և սևովյան նեղուցների հարցը .....	10
ԳԼՈՒԽ III	
Խորհրդա – թուրքական հարաբերությունները և Հայկական հարցը .....	22
ԱՄՓՈՓՈՒՄ .....	42
Резюме .....	44
Summary .....	45
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	46

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼքոնՅԱՆ

ԽՈՐԴՐԴԱ – ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1945 – 1947 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.  
ՄԵՎՃՌՎՅԱՆ ՆԵՊՈՒՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ  
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Չափսը՝ 60x84<sup>1/16</sup>: Ծավալը՝ 3,2 տպ. մամուլ:  
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:  
Տպաքանակը՝ 200 օրինակ





[500m]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0143369

A ✓  
95163